№ 8 (99) IX ՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 1899

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak,,
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ

(Ա Շ Ո Տ, Թ Ա Թ Ո Ւ Լ)

Դարձեալ կախաղան, դարձեալ նոր զոհ. . .

„Օգոստոս 9/21-ին, երկուշաբթի առտու արշալուսին — գրում է Կարինից մեր ընկերը — վաշտ մը զօրքի հսկողութեամբ՝ Արամեանը բանտէն կախաղանի վայրը առաջնորդեցին։ Արամը առանց մէկու մը օգնութեան, հաստատ քայլերով պատուանդանի վրայ բարձրացաւ, վայրկենաբար հաւաքւած բազմութեանը դիմեց, բանի մը ազգու խօսքերով ձաղկեց տաճիկ կառավարութեան ոճիրները, յայտնեց թէ ինքը հանգիստ հոգով կը զոհուի իր սիրած ազգին ազատութեան համար և ապա „կեցցէ՛ Յեղափոխութիւն, Vive la Révolution!" գոչելով՝ ինքն իր ձեռքով չուանը վիզն անցուց. . .

„Ամերիկեան հիւպատոսը հոն էր և նահատակին լուսանկարը հանեց։ Դիակը ամբողջ երկու օր կախուած մնաց հրապարակին վրայ։ Թիւրք ամբոխը շարունակ կ'երթար դիտելու, հայերէն՝ ոչ ոք։ Երկու օր ետք միայն մարմինը յանձնուեցաւ առաջնորդարանին և հայերը խուռն բազմութեամբ ու հանդէսով փութացին իրենց վերջին տխուր պարտքը տալու քաջարի նահատակին"...

ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ — ARAM ARAMIAN

Նախնած Կարինում օգոստ. 21 — Pendu à Erzéroum. le 21 Août

Ո՞վ էր կախաղանից յեղափոխութիւն գոչող մոլեռանդ նահատակը։

Արամ Արամեան, ընիկ կարնեցի, երբեմն քարտուղար թաղական խորհրդի, անմիջական ծնունդ քաղաքական բռնութիւնից արիւնաքամ եղող հայ ժողովրդի, յարեց „Դաշնակցութեան" 1890 թւին, հազիւ 20 տարեկան հասակում, և յայտնի դարձաւ „Աշտ" ու „Թաթուլ" կեղծանուններով։ Նորմտած Կարինի գործող կոմիտէի մէջ, Արամեան 1891 թւի օգոստոսի վերջերին ստիպուեց հեռանալ Կարինից մի ապանութեան պատճառով. նրան վիճակուեց սպանել Խաչատուր Կերեկեհանին, որ, կոմիտէի կարծիքով, խոչընդոտ էր հանդիսանում յեղափոխական գործին։

Դաշնակցութեան Կենդրոնը (այն ժամանակ ապակենդրոնացում ընդունուած չէր) համամիտ չէր Կերեկեհանի դէմ արձակուած այդ վճռին և երբ, չնայած Կենդրոնի հակառակութեանը, Կարինի կոմիտէն իրագործեց իր վճիռը, Կենդրոնը առանձին թռուցիկով դատապարտեց այդ քայլը։ Մասամբ այդ պատճառով, մասամբ երկրից դուրս նոր պայմանների մէջ ընկնելով, Թաթուլը մի ամբողջ տարի ատանդական կեանք վարեց Կովկասում, մինչև 1892 ամառը, երբ տեղի ունեցաւ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը։ Այդ Ժողովին Արամեան իրեն յատուկ կրակով՝ պաշտպանում էր մի ծրագիր, որ իր „հաւատամքն" էր կազմում այն ժամանակ։ Նա դէմ էր ընդհանուր ապստամբութեան, ընդհանուր ցոյցերի վերաբերեալ բոլոր առաջարկութիւններին, համարելով այդ բոլորը անկարելիութեան չափ դժուար մեր տկար ու ցրուած

ժողովրդի համար։ «Այդ բոլորի փոխարէն — պնդում էր նա — պէտք է ընդունել գործունէութեան մի այլ սիստէմ, այն է՝ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԷՌՕՐ, ուղղած կառավարութեան կեղեքիչ պաշտօնեաների ու ամէն մի ճնշողի դէմ։ Թող տէռորիստի պարտքը լինի վերջ դնել բռնաւորների կեանքին եւ սպանութիւնը կատարելուց յետոյ երբեք փախուստ չտալ, այլ կանգնել տեղնուտեղը եւ յայտարարել, որ ինքն է կատարողը, առանց ուրիշների մասնակցութեան եւ պրդման, որպէսզի իր պատճառով չվնասուեն ուրիշները, շատ անգամ ամբողջ գիւղեր ու համայնքներ»։ Գուցէ շատերին անգործնական թւի այդ ԱՆՀԱՏԱԿԱՆ ծրագիրը, բայց անհերքելի է, որ դա նրա անձնական քաջութեան եւ սպասական վեհ բնաւորութեան պերճախօս նշանն է։ Արամեանի այդ առաջարկը ընդունելութիւն չգտաւ Ընդհանուր Ժողովում, եւ այդ իսկ պատճառով նա, անխախտ համոզած իր մտքին, հեռացաւ կազմակերպութիւնից եւ մինչեւ 1894 դուրս մնաց յեղափոխական գործոն աշխատանքներից, զբաղուելով գլխաւորապէս ընդհանուր պրոպագանդայով։

Բայց ահա վրայ հասաւ 1894 թւականը, հայկական շարժման ընթացքում այդ նշանաւոր տարին, եւ մի շարք դէպքերի ու երեւոյթների ազդեցութեան տակ՝ նա, այդ տարուայ աշնանը, վճռեց նորից երկիր մտնել. . .

Նրա ուշադրութեան գլխաւոր կէտը այժմ — ժողովրդի ինքնապաշտպանութեան պահանջին բաւարարութիւն տալն էր։ Միանգամայն արտակարգ եռանդով՝ կամաւորներից կուռող ֆէդայական խմբեր էր կազմում նա զանազան վայրերում, իրար հետ սերտ փոխադարձ յարաբերութեան մէջ դնում, զէնքեր փոխադրում եւ բաժանում. . . Եւ այս բոլորը երկու կենսական նպատակների համար. մէկ՝ որ անզուսպ թշնամիները, օգտուելով հայ ժողովրդի անզէն լինելուց, անակնկալ յարձակումներով աղէտների պատճառ չկարողանան դառնալ, եւ երկրորդ՝ որպէսզի իր եւ իր ընկերների կազմած, փայփայած մեծ ծրագիրը մի օր յաջողութեամբ պսակւի։

Թէ որո՞նք են Արամեանի արդիւնաւոր գործունէութեան պտուղները՝ մի մի յիշատակելը անյարմար ենք դատում։ Դա ապագայի գործ է։ Այսքանը միայն կ'ասենք, որ Արամեանի նման գործիչների կորուստը լոկ անհատի կորուստ չէ, այլ, կարծես, կուռող բանակի մի ամբողջ մասի մահացում, — այնքան բարձր էր նա նոյնիսկ յեղափոխական դրօշը ամուր բռնած ընկերների շարքում իր բարոյական բացառիկ բնազդներով, համոզմունքի ու գաղափարի տոկունութեամբ, իր առաջնակարգ ընդունակութիւններով. . .

Ձերբակալւելով 1896 թւի յուլիս 9-ին, Արամեանը մինչեւ կախաղան բարձրանալը, ամբողջ երեք տարի, փակւած մնաց Կարինի բանտում, ենթակայ ամէն տեսակ տանջանքների, բայց երբեք նա չմոռացաւ իր միակ տենչանքը — մեռնել փայլուն ճակատամարտի մէջ զէնքը ձեռին, զինակից ընկերների կողքին. . .

Թէ որքան մեծ էր նրա հաւատը եւ որքան համոզած յեղափոխական էր Արամեանը, այդ պայծառ կերպով երեւում է իր մի նամակից, որ գրել է 1896 յուլիս 30-ին Կարինի բանտից — մի նամակ այնքան յուզիչ եւ այնքան պերճախօս, որ մենք կը տպագրենք ,,Դրօշակ"-ի յաջորդ համարում, իբրեւ նրա իդէալների արտայայտութիւն։

Այդ իդէալների համար էր, որ նա սիրով կախաղան բարձրացաւ. . .

Կարինի մռայլ բանտը կալանաւորներ շատ է տեսել. այդ բանտից հազարաւոր մարդիկ են տարել դէպի կախաղան, բայց այնպիսի հերոսներ, ինչպէս Արամեանը — երբեք։ Երեք տարուայ տաժանելի բանտարկութիւնը, անինայ ծեծը, որ յաճախ գործ էր դրւում նրա վրայ, կախաղանի հեռանկարը, որ մի քանի անգամ յաջորդեց 101 տարուայ բանտարկութեան վճռին, նախկին ընկերոջ ստոր մատնութիւնը *), անվերջանալի եւ բազմատեսակ սպառնալիքները — այդ բոլորը մի բոպէ, մի վայրկեան անգամ չթուլացրին նրա հերոսական կրծքում հայրենիքի ազատութեան հաւատը, եւ նա այդ կենդանատար հաւատով՝ հասատ քայլերով բարձրացաւ կախաղան ու աչքերը դարձրած սարսափահար ամբոխին գոչեց

«Կեցցէ՛ յեղափոխութիւն, կեցցէ՛ յեղափոխութիւն»...

Սարո՜ւկ, դժբա՜խտ ժողովուրդ, որ չկարողացաւ արձագանգ տալ նահատակի հոգուց բխած այդ գոչին. . .

Բայց թող չվրդովւի՜ հանգիստդ, թանկագին ընկեր։ Շատ չի անցնիլ եւ ստրուկի ազատ որդին, հպարտութեամբ կանգ առնելով նոյն վայրում, ուր կանգնած էր քո սեւ կախաղանը, լիաբերան կը գոչի.

,,Փա՜ռք յեղափոխութեան.

Փա՜ռք նահատակի յիշատակին"...

*) Մի զարշելի դաւաճան, խնուսցի Ցիզրան Գէորգեան, ծանօթ՝ Ազբայիլ կեղծանունով, որ երբեմն Կարինի յեղափոխական գործի մէջ էր եւ շատ մօտիկ Արամեանին, իսկ վերջը դարձաւ լրտես, մտաւ ոստիկանական ծառայութեան մէջ եւ յաճախ ներկայ լինելով Արամի հարցաքննութիւններին, ուղղութիւն էր տալիս քննիչի հարցերին։

ՆՇԱՆԱՒՈՐ ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Պր. Պիէռ Քիյառ, բանաստեղծ և հրապարակագիր, — որուն մեզ ուղղած մէկ նամակը կը դնենք ստորև, — անծանօթ մը չէ մեր հասարակութեան։ Երկար ատեն Պոլիս ապրած, մօտէն ծանօթ թիւրք կեանքին, սիրած հայ ցեղը իր բոլոր առաւելութիւններովն ու թերութիւններովը, հայկական խնդրին ամէնէն ամէհի ախոյեաններէն մէկն եղած է և է։ Հզօր գրիչ մը, անկաշկանդ միտք մը, բարձր հոգի մը — ահա ընորոշ գծերը այն մարտիկին, որ երեք տարիէ իվեր անդուլ կը յուզէ Ֆրանսայի ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԸ արմատական մամուլին մէջ։ դեռ վերջերս ալ, ինչպէս գիտեն մեր ընթերցողները, Aurore-ին ՄԵԾ ՄԱՐԴԱՍՊԱՆ խորագրով բաժին տակ, օրւան խնդիրներուն կարգն անցուց մեր դատը։

Paris, le 24/6 octobre 1899.

Camarades,

La Bête Rouge Abdul-Hamid fait peser sur toutes les races de son empire une abominable oppression, mais sa férocité s'exeree d'une façon toute particulière sur les Arméniens.

Պարիզ, 24/6 Հոկտեմբեր 1899

Ընկերնե՛ր,

Աբդիւլ Համիդ Կարմիր Գազանը իր կայսրութեան բոլոր ցեղերը կը ճնշէ գարշելի կեղեքումի մը տակ։ Բայց իր վայրագութիւնը մասնաւոր կերպով գործ կը դնէ հայերուն վրայ։

Malgré les massacres, l'emprisonnement, la transportation en masse, la famine organisée, les persécutions sans nombre, vous êtes décidés à ne pas cesser la lutte contre celui qui ne laisse à ses sujets d'autre recours que la révolution.

Les gouvernements des peuples dits civilisés se sont fait les complices et les valets de votre bourreau qui les paye en concessions financières et en décorations. Mais dans tous ces pays vous avez l'appui des hommes de cœur et des révolutionnaires qui refusent de s'associer aux hontes officielles des gouvernants, leurs maîtres et leurs ennemis.

De toutes nos forces nous continuerons, avec vous et pour vous, le combat contre le grand assassin par la parole et par la plume et, le moment venu, par l'action.

J'ai été des vôtres depuis le jour où les hasards d'un long séjour en Orient m'ont fait assister au martyre de votre peuple.

Soyez sûrs, camarades, que je ne faillirai pas dans l'avenir à mon devoir de solidarité humaine et révolutionnaire.

Pierre QUILLARD.

Ջարդերուն, խմբովին բանտարկութեան և տարագրութիւն, կազմակերպուած սովին, անթիւ հալածանքներուն հակառակ, դուք վճռեր էք չդադրեցնէք կռիւը այն մարդուն դէմ, որ յեղափոխութենէն դուրս ուրիշ ապաւէն մը չի թողներ իր հպատակներուն։

Քաղաքակիրթ կոչուած ժողովուրդներու կառավարութիւնները ձեր դահիճին մեղսակիցն ու ծառաները եղան, իրը վարձ ստանալով ելևմտական արտօնութիւններ ու շքանշաններ։ Բայց բոլոր այդ երկիրներուն մէջ ձեր թևութիւնքն են սրտի մարդիկ և յեղափոխականներ, որոնք կը մերժեն մասնակցիլ իրենց տէր ու թշնամի վարիչներու պաշտօնական խաղ-խայտառակ գործերուն։

Մեր բոլոր ուժով մենք պիտի շարունակենք, ձեզ հետ և ձեզ համար, Մեծ Մարդասպանին դէմ կռիւը, խօսքով ու գրիչով, և երբ ժամը գայ, գործով։

Ես ձերիններէն եղայ այն օրէն՝ երբ Արևելքի մէջ երկար բնակութեան մը պատահմունքը հանդիսատես ըրաւ ինձի ձեր ժողովուրդին նահատակութեանը։

Վստահ եղէք, ընկերնե՛ր, որ ապագային ալ պիտի չթերանամ մարդկային և յեղափոխական համերաշխութեան իմ պարտքիս։

ՊԻԷՌ ՔԻՅԱՌ

ԱՄԲՈԽԱՅԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

„Եթէ կարելի լինէր ենթադրել, որ տաճկական վարչութիւնը այսպիսի ճգնաժամում (1876, սեպտեմբեր) կարող է Եւրոպայի համաձայնութեամբ կամ նրա վաւերացմամբ շարունակել իր օրինական գոյութիւնը Բուլգարիայում, այդ դէպքում պէտք է յանցանք համարել մարդկային արդարադատութեան ամէն մի քողոք իշխանութիւնը իշարը գործ դնելու դէմ, ամէն մի ընդդիմադրութիւն ամէնազազրելի բռնապետութեան դէմ։ — Բայց մենք դեռ չենք հասել այդ տեսակ ծայրայեղ ստորացման“...

Վ. ԳԼԱԴՍՏՕՆ

III

Մենք արդէն ցոյց տուինք հայկական աղէտների հիմնական պատճառները և այսպէս անուանուող առիթ կամ պատրուակների դերը այդ աղէտներում։ Ցխտելով միանգամայն, թէ հայ յեղափոխական շարժումը մեր անհամար կորուստների հիմնական պատճառներում ոչէ տեղ է բռնում, մենք ցոյց տուինք նաև, որ այդ շարժումը նոյնիսկ առիթ կամ պատրուակ կարող է համարուել միմիայն սահմանափակ, պայմանական մտքով — նոյնչափ, որչափ առհասարակ հայ ժողովրդի ազատութեան խնդրի հետ կապ ունեցող ամէն մի, թէկուզ շատ ցանկալի, թէկուզ բոլորից ջատագովող երևոյթ։

Այդպիսով կամայ ակամայ մեզ համար պարզուում է, որ այն բոլոր գանգատները, որոնք այսօր ծանրանում են յեղափոխական շարժման կամ ձեռնարկների վրայ, իրը կոտորածների պատճառ կամ առիթների վրայ, — իսկապէս ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամբոխային տրամաբանութեանը յատուկ խառնիճաղանճ ճիչեր, որոնք անխուսափելի են դառնում, երբ մարդիկ կամ անընդունակ են ըմբռնելու այդ շարժման ամբողջ նպատակայարմարութիւնը և կամ գաղափար չունեն դրա զարգացման համար անհրաժեշտ պայմանների մասին։ Հազար ու մի տեսակ ձեռնպահութիւններ, պայմանական համաձայնութիւններ, „թէև“ ու „բայց“-երի հետ համեմուած համակրութիւններ կամ հակակրութիւններ — դրանք բոլորը խեղճուկ մտքի արտայայտութիւններ են, որոնց տակ թագնուում է կամ փափուկ կեանքի սիրահար հակայեղափոխականի դժգոյն ու անտարբեր դէմքը կամ եսամոլ իմաստակի աղքատիկ հոգին։ Հարցերը ուրեմն այդպէս էլ դնենք — այսինքն՝ նայենք.

1. Որքան անխուսափելի, որքան բնական և միաժամանակ որքան ցանկալի էր հայ յեղափոխական շարժումը, և

2. Որքան նպատակայարմար էր նրա գործնական ընթացքը կամ ուրիշ խօսքով՝ նրա ընդունած տակտիկան անմիջական կուռում։

Սկսենք առաջին կէտից։

Տաճկական կեանքի իսպառ անբարոյական, անսահման տգէտ և մոլեռանդ մթնոլորտը, կապուած այն ընդհանուր ատելութեան և մշտական վտանգի զգացմունքների հետ, որոնք միշտ դեր են խաղացել տիրող տաճիկների և հպատակ քրիստոնեաների յարաբերութիւններում, վաղուց դրել էր Թիւրքիայի քրիստոնեայ ժողովուրդներին այնպիսի հակակուլտուրական պայմանների մէջ, ուր

ամենավայրենի հալածանքներ, անօրինակ հարստահարութիւններ, ստրկական իրաւազրկութիւն, կատարեալ անապահովութիւն, աղքատութիւն, պանդխտութիւն և այլն դարձել էին մշտական երևոյթներ նրանց կեանքում։ Եւրոպական պետութիւնների աչքածակութիւնը դէպի քայքայւող Թիւրքիան լրացնում էր երկրի խառնակ, անապահով, տագնապալից ներքին կեանքը, — եւ ահա տաճկահպատակ քրիստոնեաների համար ստեղծւել էր իրերի մի դրութիւն, որի ճնշման տակ նրանք օրից օր, ժամից ժամ բարոյապէս աւելի և աւելի պիտի ընկնէին, տնտեսապէս թշւառութեան հասնէին, մտաւորապէս յետադիմէին, քաղաքականապէս ջնջման սիստէմի մշտական առարկայ լինէին։

Այդ էր պատճառը, որ տաճկական բռնութեան տակ հեծող Ցունաստանը յուզւում էր դեռ անցեալ դարից սկսած. այդ էր պատճառը, որ Կրէտէ, Լիբանան, Սերբիա, Շերնոգորիա, Ռումանիա, Բոսնիա, Հերցոգովինա, Բուլգարիա, կուելով, ոմանք հարիւր տարուց աւել, ոմանք պակաս, իրենց մեծաքանակ զոհերի գնով միանգամայն ապացուցեցին, թէ որքան անտանելի էր տաճկական լուծը „խաղաղ“ կեանքով ապրելու համար։ Նոյն պատճառն էր, որ դեռ 1774 թւին, ռուսաց կայսրուհի Եկատերինա II-ի օրով Քիւչիւք-Քայնարջիի դաշնագիրը դրեց տաճկահպատակ սլաւոնների ռուսաց կառավարութեան պաշտպանութեան տակ։ Նոյն այդ պատճառովն էր, որ դեռ 1815 թւին ռուս կառավարութեան մի ծանուցագիրը եւրոպական պետութիւններին, առաջարկում էր Եւրոպայի ընդհանուր հովանաւորութեան տակ վերցնել տաճկահպատակ քրիստոնեաներին։ Նոյն այդ պատճառովն էր, որ Անգլիա, Ֆրանսիա, Աւստրիա և Պրուսիա 1854 ապրիլ 9/21-ին հաւաքական արձանագրութեամբ պահանջում էին „տաճկահպատակ քրիստոնեաների քաղաքական և կրօնական իրաւունքների ապահովում“ — մի պահանջ, որ քիչ յետոյ, 1856 թւի մարտ 30-ին, Պարիզի դաշնագրում 9-րդ յօդւածը դարձաւ, իսկ 1860 թւի օգոստոս 3-ին իրաւունք տւեց Աւստրիային, Պրուսիային և Ռուսաստանին, կրկին առանձին արձանագրութեամբ, պարտաւորել Տաճկաստանը „ընդունել լուրջ վարչական միջոցներ օսմանեան կայսրութեան ամէն դաւանութեան քրիստոնեաների կացութիւնը բարելաւելու համար“։ Եւ այդպէս շարունակ մինչև աւստրիական մինիստր կոմս Բէյստի առաջարկութիւնը 1867 թւին — բոլոր տաճկահպատակ քրիստոնեաներին տալ սահմանադրութիւն — և վերջապէս մինչև Բերլինի դաշնագիրը։

Նիւթի հանրածանօթութիւնը և „Դրօշակ“-ի ծաւալը մեզ ստիպում են չծանրանալ յատկապէս հայ ժողովրդի նախայեղափոխական „երջանիկ“ դրութեան նկարագրի վրայ։

Հարիւր հազարաւոր գաղթականութիւններ սկսած անցեալ դարից. բռնի գաղթականութիւն ռուսաց սահմանակից նահանգներից դէպի Տաճկաստանի խորքերը (Սերգէյ Գլինկա — „Հայերի գաղթականութիւնները“). հարիւրաւոր գիւղերի ու վանքերի հողերի յափշտակութիւն (1872 և 1876 թւի պատրիարքական տեղեկագրեր). հարիւրաւոր ուրիշ գիւղերի կատարեալ աւերումը (Կապոյտ գիրք, 1880 թ.). մասնակի կոտորածներ և հայերի ջնջման բացայայտ ծրագիր (Բայազէդ 1877 թ., Զէյթուն ու Քեամիլ փաշա 1879 թ. և այլն). բազմաթիւ գաւառների բռնի կրօնափոխութիւն դէպի մահմէդականութիւն (մանաւանդ Կարինի և Տրապիզոնի նահանգներում). կամաւոր կրօնափոխութիւն դէպի կաթոլիկութիւն և բողոքականութիւն. նիւթական նպաստներ կամ օտար պետութիւնների հովանաւորութիւն ձեռք բերելու ակնկալութեամբ (ամբողջ Թիւրքաց Հայաստանը). պարբերական սով տասնեակ հազարաւոր զոհերով (1880 թ.). հարիւր հազարաւոր չէրքէզների, տաճիկների, լազերի, քրդերի, և Թարաքամաների Հայաստան և Փոքր Ասիա տեղափոխելը — ահա նախայեղափոխական „երջանիկ“ դրութեան մեծաքանակ „բարիքները“, ահա այդ դժոխային դրութեան սոսկալի արտայայտութիւնները։ Եւ այս բոլորի հետ ընթանում էր հայ ժողովրդի առօրեայ կեանքը — մշտական երկիւղ, անպատւութեան և անվերջ զրկանքների այդ հրէշային վանդւածը։

Բայց տեղ տանք օտար հեղինակների մի քանի ընդհանուր դիտողութիւններին էլ։

«Դեռ 1855 թւին, ասում է Բրայս, գէնէրալ Սըր Ֆ. Վիլիէլմ գրում էր, որ հայկական նահանգները ամէն տեսակէտից առաւելում են սիստէմական անարգ հարստահարութիւնների] տակ, եւ բնորոշում էր Թիւրք կառավարութիւնը իբրեւ բռնակալութեան մի այնպիսի մեքենայ, որ իր նմանը չունի ամբողջ աշխարհում»։

Իրլանդացի դոկտոր Ռայտ, Սիբիրայում երիցական առաքելութեան մեծաւորը, 1877 թւին իր հրատարակած մի գրքում իմիջի այլոց ասում է.

«Տաճիկները աւերած են առաջացնում ոչ միայն վայրագ կատաղութեան մէջ, այլեւ կատարեալ սառնասրտութեամբ եւ միանգամայն հանձնարարական իրենց իրաւագիտութեան, օրէնսդրութեան եւ հաւատին... Թիւրք կայսրութեան մէջ հազիւ թէ դտնւի մի գիւղ, որ չունենայ իր զարհուրելի յիշողութիւնները, — այնքան սոսկալի յիշողութիւններ, որ անկարելի է մտածել կամ խօսել նրանց մասին»...

Կոտորածները, գրում է Դիլօն, „երկնքի ողորմութիւն են“, համեմատած հայերի „ամէնօրեայ դժոխային դրութեան հետ“։

«Երդմամբ հաւատացնում ենք ձեզ,— գրում են Խընուսցի հայերի 36 ներկայացուցիչները անգլիական ազգին ուղղած խնդրագրում,— որ Սասունում տեղի ունեցած կոտորածը միմիայն մի կաթիլ է հայկական այն արեան ովկիանոսում, որ հեղեղեալ եւ լռելեայն թափւում է ամբողջ օսմանեան կայսրութեան մէջ»...

Կրկին յիշեցնելով, որ Բոլէն Ժակմէնը հրատարակել

է իր գիրքը հայկական կոտորածներից շատ առաջ, բերում ենք նրանից հետևեալ տողերը.

«Չի կարելի երեւակայել աւելի սարսափելի դրութիւն, քան թշւառ, ստրկացած, անպաստած եւ կկղեքւած հայ ժողովրդի դրութիւնը... Ամէն տեղ, ամէն քայլափոխում աւերման եւ բռնակալութեան ոգին արտայայտւում է հազարաւոր ձեւերով եւ եթէ մեր արեւմտեան նոյնիսկ ամէնահամբերատար ժողովուրդներից մէկին վիճակւէր ենթարկւել այդ աղէտներին, թէկուզ միայն մի օրւայ ընթացքում, իսկոյն դուրս կը թռչէր նրա կրծքից զայրոյթի աղաղակ»...

Եւ այլն և այլն։

Այսպէս են խօսում նախայեղափոխական „երջանիկ“ շրջանի մասին փաստերը, այսպէս է խօսում կեանքը, այսպէս են խօսում թիւրքաց Հայաստանի կեանքին ծանօթ մարդկանցից հարիւրից իննսուն ինը։

Բայց ինչ է ասում մեզ այս բոլորը։ Միակ եզրակացութիւնը, որ մենք կարող ենք անել — այդ այն է, որ հայկական կեանքը վաղուց եկել, կանգ էր առել մի խոշոր դիլէմայի առաջ. — կամ անպայման ջնջում իբր մի ամբողջութիւն, իբր մի ազգութիւն, իբր մի հայրենիքի տէր ժողովուրդ, կամ դիմադրութիւն՝ կեանք, պատիւ, ստացւածք, տուն, հայրենիք, ամէն ինչ բռնաբարող ուժի դէմ։ Միջին ուղիների սիրահարները, ինչպէս վայել է իրենց, իհարկէ, այստեղ էլ գտնում էին մի երրորդ ելք, կարծելով. թէ հայ ժողովուրդը իր կուլտուրական հակումների շնորհիւ յաղթող պիտի հանդիսանայ իրեն շրջապատող տխուր մթնոլորտում, առանց զէնքի դիմելու և դրանով պիտի աւետէ արարածներին մի նոր սկզբունք, որ մարդկային պատմութիւնը իր ամբողջ տարածութեան վրայ միշտ անտես էր արել — այն է, որ կարելի է ազատութիւն ձեռք բերել լոկ „քաղաքակրթական խաղաղ պատերազմով“։

Սակայն օրէցօր աւելի և աւելի ծանրացող դառն իրականութիւնը մի կողմից և միւս կողմից այդ սոսկալի դրութեան գիտակցութիւնը հայ հասարակութեան այն մասերում, որոնց սթափեցրել էր մեր մտաւոր շարժումը, հետզհետէ դալիս էին համոզելու հայերին, որ նրանք լաւ կ'անեն, եթէ առայժմ հրաժարւեն այդպիսի մի մեծ ծառայութիւնից յօգուտ ընդհանուր մարդկութեան, և որ ընդհանրութեանը մեծ ծառայութիւններ մատուցանելու համար հարկաւոր է նախ պաշտպանել և ապահովել սեփական գոյութիւնը։ Եւ երբ դրութիւնը ստանում է այդպիսի սուր կերպարանք, երբ պարզւում է, որ իրերի ընթացքը ինքնըստինքեան դէպի կորուստ է տանում, բնական չէ՞ արդեօք, որ մի ժողովուրդ այդպիսի հանգամանքներում ընտրի այն թէև վտանգաւոր, բայց և յուսատու ուղին, որ զոհերի հետ միասին խոստանում է նաև ոևէ ապագայ։ Առաջին դէպքում անխուսափելի է անպատիւ, տմարդի, ժողովրդի անհուն ստորութիւնը ապացուցանող անպայման կորուստ. երկրորդը միայն մի վեհ, մի փայլուն, մի սրբազան ռիսկ է պայմանական յաջողութեամբ։ Ապահով և պատւաւոր կեանքի հզօր բնազդը — այն յատուկ, հրաշագործ բնազդը, որով ապրում ու գործում են ժողովուրդները, թէև շատ թուլացած, բայց բարեբախտաբար դեռ իսպառ չէր բթացած հայ ժողովրդի որոշ մասերում, և միակ այդ բնազդը արդէն բաւական էր՝ մահաբեր դիլէմայի դիմաց՝ ինքնապաշտպանութեան բոլոր զգացմունքները նրանց մէջ լարելու համար։ Բայց մենք ունեցանք և մի ուրիշ զօրեղ նպաստաւոր հանգամանք, որ վերջապէս պիտի որոշէր, արագացնէր հայութեան ելքը այդ տատանման շրջանից։ Այդպիսի մի պայման եղաւ Բերլինի դաշնագիրը իր 61-րդ յօդւածով։ Եթէ մինչև այդ յօդւածը՝ ջնջման հեռանկարից խուսափել ուզենալով, ջլատւած, տկարացած և իր տխուր անցեալի բազմաթիւ բացասական հետքերը կրող հայը կարող էր նաև վախենալ ռիսկի վտանգից, — այդ յօդւածով հայութիւնը իրեն արդէն դաշնակից է տեսնում եւրոպական ամբողջ վեց պետութիւններ, և յաջողութեան պայմանական յոյսերը ուղղակի հաւատի պիտի փոխարկւէին։ «Je m'insurge, donc je suis» — գոռում էր Եւրոպան և հայերի մէջքին կանգնում։ Ցատանումը այլևս անկարելի էր, — և ահա ժողովրդի սրտից պայթում է յեղափոխական շարժումը իր հոսանքի մէջ ընդգրկելով ժողովրդական հերոսների և գրական գործիչների մի ամբողջ շղթայ ու յեղափոխական յայտնի կամ անյայտ կուսակցութիւնների մի ամբողջ ցանց Եւրոպայում և Մայր երկրում։

Հարցնում ենք ուրեմն, բնակա՞ն էր, ցանկալի՞ էր վերջապէս հայկական յեղափոխական շարժումը թէ ոչ։ Արդեօք յեղափոխական հոսանքը ինքը հարազատ և միակ յուսատու զաւակն էր իրական կեանքի, թէ նրա վրայ արւած արհեստական մի պատւաստ։

Եւ ընդհակառակը՝ եթէ կայ մի բան, որի մասին կարելի է ափսոսալ, — այդ արդեօք այն չէ՞, որ շատ ուշ ստեղծւեց այդ շարժումը մեր մէջ և որ դեռ մինչև այսօր էլ մենք շատ թոյլ ենք այդ միակ յուսատու ճանապարհի վրայ։ Գոնէ օտարները և նոյնիսկ տաճիկ կառավարութիւնը շատ բնորոշ են խօսում այդ մասին։

Մենք արդէն նախորդ յօդւածներով ցոյց տւինք, որ օտար հեղինակներից ոմանք „հայ յեղափոխական գաղափարը“ ուղղակի անւանում են „սարսափելի կացութեան հետևանք“։

Բայց լսենք էլի մի քանիներին և ամէնից առաջ՝ հեղինակաւոր թիւրք կառավարութեան։

1893 թւին սուլթան Աբդիւլ Մէջիդի ստորագրութեամբ հրատարակւած „Թանզիմաթը“ հռչակում էր.

«Ոչ ոք, որքան էլ իրենք խաղաղասէր լինի, չի կարող չդիմել բռնի միջոցների, երբ վտանգւում են նրա կեանքն ու պատիւը»։

Հռչակաւոր կանոնիկոս Մակկոլը.

«Ես իսկոյն կը նկարագրեմ հայերի ջնջման այդ

դիւական ծրագրի զարգացումը։ Իսկ այժմ թոյլ կը-տամ ինձ անկեղծօրէն ասելու, որ հայերը եթէ ոեւէ հնչին յոյս ունէին յաջողութեան վրայ, ոչ միայն իրաւունք պիտի ունենային, այլեւ իրենց սրբազան պարտականութիւնը պիտի համարէին ապստամբել եւ տապալել այն դժոխային կառավարութիւնը, որ դատապարտում է նրանց՝ մարդկային տարեգրութիւնների մէջ երբեւէ պատահող ամէնաատորացուցիչ, ամէնադաժան եւ յուսազուրկ ստրկութեան... Բարձրագոյն Դռան նման աւազակային կառավարութեան զոհերը պարտաւոր չեն ամենուին հաւատարիմ լինել նրան եւ իրաւունք ունեն խորտակել այդ կառավարութիւնը առաջին յարմար դէպքում... Ազգերի ամենամեծ շահը խաղաղութիւնը չէ, որովհետեւ կարելի է խաղաղութիւն վայելել եւ անարգ վատութեան մէջ, ուրանալով ամէն սրբութիւն»...

1880 թւի սեպտեմբեր 23-ին բրիտանական հիւպատոս Էվէրստը գրում էր Կարինից կոմս Գրանվիլին.

«Միայն ժողովրդի համբերութեամբ, երկչոտութեամբ եւ նրա զանազան խաւերի մէջ եղած կապերի թուլութեամբ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ արեւելեան սանջակները անցեալ տարի (1879) հարկերը բաժանելիս չապստամբեցին կառավարութեան դէմ, ոտքի կանգնելով իրը մի անձ»։

Տասը տարի այս խօսքերից յետոյ, այսինքն 1890 թւին՝ նոյն տեղից գնդապետ Զարմայդը արդէն հաղորդում էր.

«Վերջին տարիներս Կարինի եւ ուրիշ գաւառներում կազմակերպւող գաղտնի ընկերութիւններն ու կոմիտէները, զէնք ձեռք բերելու դիտաւորութիւններն ու փորձերը, վերջին ժամանակներս Վանում եւ շրջակայքում տեղի ունեցած դէպքերը — այդ ամէնը ցոյց է տալիս, որ իսկապէս գոյութիւն ունի խորին դժգոհութիւն։ Եւ իրաւ, տարօրինակ կը լինէր սպասել ուրիշ բան, քան դժգոհութիւն»։

Լսենք և հեղինակաւոր Բոլէն ծակմէնի կարծիքը այդ մասին.

«Բոսնիան, Հերցոգովինան, Բուլգարիան 1856 թւի դաշնագրում արտոնեալ տեղ չէին բռնում։ Այնտեղ նրանք մինչեւ անգամ չեն էլ յիշատակւած, ինչպէս չեն յիշատակւած Կրէտէն եւ Լիբանանը։ Ինչո՞ւ ուրեմն Եւրոպան եռանդուն կերպով շահագրգռւեց այդ երկիրների քրիստոնեայ ազգաբնակութիւններով դեռ 1878 թւից շատ առաջ եւ ոչ մի պահանջ չներկայացրեց Հայաստանի քրիստոնեաների վերաբերմամբ։ Դժբախտաբար, ես ոչ մի բացատրութիւն չեմ գտնում այս տարբեր վերաբերումների համար դէպի զանազան ազգերը, բացի այն, որ հայերը փոխանակ ապստամբելու բաւականացան միայն գանգատներով... ...Եթէ տաճկական հալածանքները ճնշած հայերի մէջ խորին լոգ են զարթեցնում ստանալ ոչ միայն անձնական ապահովութիւն, այլեւ ընդհանուր ինքնավարութիւն այն հողի վրայ, ուր իշխել են նրանց նախնիքները, եւ դաշնագրերի գծած սահմաններում, — այդ ամենուին արդիւնք չէ սովորական ինտրիգի, այլ մի պատւաբեր երեւոյթ մարդկային քնաւորութեան համար, որ արիանում է աղէտների մէջ եւ չի բաւականանում գոյութեան լոկ նիւթական պահանջների գոհացմամբ»...

Վերջապէս 1894 թւի փետրւար 20-ին Ֆրանսիական դեսպան Կամբոնը իր կառավարութեանը տւած մի զեկուցման մէջ՝ իմիջի այլոց՝ ասում է.

«Իմ անցեալ տարւայ զեկուցումները ծանօթացրին Կեսարիայում, Մարզւանում, Անգօրայում տեղի ունեցած դէպքերի հետ... Իր անգթութեամբ Բարձրագոյն Դուռը սրբագործեց հայկական շարժումը, որ այժմ արդէն ունի իր նահատակները»...

Այդպէս ուրեմն — եթէ ձեւակերպենք նոյնիսկ վերեւ յիշած անձերի բառերով — տիրող հանգամանքներում հայկական շարժումը ոչ միայն անխուսափելի էր, որովհետեւ այդ էլ պահանջում „իրերի կացութիւնը“. ոչ միայն իրաւացի էր, որովհետեւ ոեւէ ազգ պարտաւոր չէ անպատճառ հաշտւել „ամէնադաժան ստրկութեան“ հետ կամ մնալ „անարգ վատութեան“ մէջ. ոչ միայն շատ հասկանալի էր, որովհետեւ „տարօրինակ“ կը լինէր դրա փոխարէն տեսնել ուրիշ երեւոյթ. ոչ միայն նպատակայարմար էր, որովհետեւ հայը „առանց ապստամբելու“ չէր կարողանում իր դրութիւնը այլ կերպ բարւոքել, — այլ և դեռ վաղուց սպասելի էր, որովհետեւ միայն „հարկերի բաժանումը բաւական էր հայերին ապստամբեցնելու համար“, այլ և միանգամայն պատւաբեր երեւոյթ է, որովհետեւ ապացուցանում է թէ հայերի մէջ դեռ չեն մարել „մարդավայել բնաւորութեան“ բնազդները, վերջապէս այսօր նա սրբագործւած մի դատ է, որովհետեւ ունի իր բազմաթիւ „նահատակները“ — դժբախտ ժողովրդի բարօրութեան գաղափարին զոհւած նահատակներ...

—

Յեղափոխութեան գործնական ընթացքի մասին մեր խօսքը յետաձգւում է միւս անգամին։

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅ ԻՆՏԷԼԻԳԷՆՑԻԱՅԻՆ

„Ամէն մարդու եւ ազգի համար հասնում է ժամանակ, երբ պէտք է կանգնել քարի կամ շարի կողմը“։

Կան վայրկեաններ ազգերի կեանքում, որոնք ճակատագրական են։ Այդպիսի մի վայրկեանում է վիճակւած մեզ ապրել։

Տարիների մի շարք, մի փոքրիկ շարք թերեւս, և վերջնապէս կը վճռւի, — պէ՞տք է արդեօք հայերս ապրենք իբրև մի ինքնուրոյն ազգ, ընդունակ և տրամադիր իրագործելու իր ներքին անկախութեան մէջ հաւասարութեան և ազատութեան իդեալները, թէ՞ անդամատւելու ենք, փոշիանալու և ցրւելու աշխարհիս չորս կողմը՝ քաշ տալու համար մեր ողորմելի գոյութիւնը իբրև մի աղանդ, ինչպէս այժմ Բեսսարաբիայում, իբրև վաշխառուների մի դասակարգ, ինչպէս Վրաստանի շատ կէտերում, իբրև ատւած մի գաղութ, ինչպէս Նոր-Նախիջևանում, — և աւելի վատ քան այժմ, որովհետեւ Բեսսարաբիայում, Վրաստանում, Նոր-Նախիջևանում մինչև այժմ և այժմ հնարաւոր էր և հնարաւոր է վառել ու վառ պահել սրտերը այն ջերմութեամբ, որ արևի նման տարածում է իր շուրջը մայր հայրենիքը, մինչդեռ այսուհետև... Ի՞նչ կը լինեն այսուհետև այդ և դրանց նման անլոյս ու անջերմ մոլը-

բակները, երբ հանգչի նրանց արեգակը, երբ Հայաստան լոկ աշխարհագրական և պատմական անուն դառնայ, երբ հայերը ջնջւեն Հայաստանում... որովհետև նրանք կը ջնջւեն անպատճառ, եթէ մի քանի տարի էլ շարունակւի մեր եղեռնական անտարբերութիւնը այս ողբերգական ժամանակում, այս երկաթի բնաւորութիւն և անսահման անձնուրացութիւն պահանջող ժամանակում, որի նմանը շատ քիչ է եղել մեր թշուառութիւններով լի պատմութեան մէջ...

Մեզ մորթում են Թիւրքիայում, բացարձակ, օր ցերեկով, հարիւրներով ու հազարներով, կամ առանց աղմուկի, կամաց-կամաց, քիչ-քիչ, խուլ անկիւններում, գիշերւայ հովանու տակ,—մեզ այլասերում են այնտեղ, մեզ սովորեցնում են տանել ամէն ստորութիւն, մինչև անտարբերութիւնը դէպի հարազատ կանանց պատիւը, մեզ թշուառացնում և անասնացնում են այնտեղ մինչ այն աստիճան, որ երեսուն արծաթով.... ոչ, երեսուն ղուրուշով ծախում ենք մեր կրօնը, մի բան, որ հաւոգմունք է, որ սրբութիւն է մեր գիւղացու համար,— մեզ հալածում, ստորացնում են Կովկասում իբրև մի յետին հրեայի, մեզ վարժեցնում են այնտեղ իբրև պատիւ ընդունել, եթէ մի լիրբ, մի հարբեցող, մի կաշառակեր ռուս պաշտօնեայ բարեհաճում է մեզ բարևել, մեզ պատւիրում են այնտեղ շնորհակալութիւն յայտնել, որ չեն մորթում մեզ, այլ միայն թքում են մեր երեսին, մեզ այն աստիճան տարդացնում են այնտեղ, որ հազարներ ենք տալիս օրթոդոքս եկեղեցի հիմնելու այն բոպէին, երբ Գոլիցին և Եանովսկի վանդալի և աւազակի նման փակում են մեր դպրոցները, խլում են նրանց կայքերը և խեղաթիւրում մեր բարեգործական հիմնարկութիւնները...

Չէ, մենք ունեցել ենք թերևս նոյնքան թշուառ տարիներ, բայց երբեք մենք այնպէս ընկած չենք եղել բարոյապէս, ինչպէս այժմ։

Բաւական չէ, որ մեր քունը չխանգարւեց և չի խանգարւում Օսմանեան Հայաստան կոչւող դժոխքի սարսափներից, մենք ապացուցինք աշխարհին, որ միանգամայն զուրկ ենք ազգային ինքնասիրութիւնից. բաւական չէր, որ չգիտենք պաշտել, սիրել, գոնէ կարեկցել ինչպէս հարկն է նահատակին, մենք ցոյց տւինք, որ չգիտենք նոյն իսկ ատել մեր եղբայրների դահիճներին և մեր երեսին թքողներին։

Եթէ լռէինք գոնէ, եթէ յաւակնութիւններ չունենայինք, եթէ խոստովանէինք, որ մենք սողուններ ենք մարդկանց մէջ, ստրուկների զաւակ և վիճակւած անվերջ ստրկութեան... Բայց չէ, մենք ստորանում ենք, սակայն փախչում ենք ստոր անունից. մենք թէորիաներ ենք ստեղծում մեր վատութիւնը արդարացնելու համար, մենք միջին ճանապարհներ ենք փնտռում բարոյականի և անբարոյականի մէջ, սուտի և ճշմարտի մէջ, մենք հաշտեցնել ենք աշխատում գառներին գայլերի հետ և փոփոխում ենք սովորական բառերի իմաստը, խենթութիւն կոչելով անձնուրացութիւնը, խոհեմութիւն՝ եսականութիւնը և խելօքութիւն՝ փոքրոգութիւնը։

Ողբա՜ն փոխւել ենք մենք մի քանի տարւայ ընթացքում։

Երբ սկսում էինք լուրջ կռիւը դարաւոր բռնակալի ու դահճի դէմ, մենք եռանդ էինք ու ոգևորութիւն, մենք վառւում էինք անհամբերութիւնից, մենք խլում էինք իրար ձեռքից ազգասէրի տիտղոսը, մենք ինքնակոչ հալածւածներ, կեղծ նահատակներ էինք դառնում, մենք վիրաւորւում էինք, երբ կասկած էին յայտնում մեր ընդունակութեան մասին զոհ բերել ամէն ինչ հայրենիքի սեղանի վրայ, մեր միլիոնատէրերի կանայք Մեծ Վարդանին էին տեսնում երազում, վիրաւոր Վարդանին, որ իրենց էր աւանդում հայոց սուրբ դրօշը, մեր բուրժուա ինտէլիգէնցիան նոր Եղիշէ էր փնտռում իր շահատակութիւնները ապագայ սերունդներին կտակելու համար...

Իսկ այժմ... այժմ, երբ մեր կռիւը սրբագործւել է թէպէտ կրաւորական, բայց ոչ գաղափարազուրկ քաջութեամբ մեռած հազարաւոր նահատակների արիւնով, նրանց անմեղ որբերի ու թշուառ այրիների արցունքով և անվեհեր յեղափոխականների տւած հերոսական զոհերով, այժմ, երբ մեր վրայ ամէն կողմից տեղում են սրի, բռունցքի, խարազանի հարւածներ՝ խառն քացիների և թուքի հետ, այժմ, երբ ամէն մի հայից պահանջւում է իր ամբողջ ուժը, ամբողջ կարողութիւնը, ամբողջ հոգին, — այժմ մենք յոգնել ենք, մենք հիասթափւել ենք, մենք սկէպտիկ ենք դարձել, մենք խելքացել ենք, ինչպէս ասում են, մեր հոսհոս Պոլսնիուսները և ոսկի որսող Համլէտները։

Մենք խելքացե՞լ ենք. մենք դիւանագէտներ ենք դարձել. մենք շողոքորթում ենք ռուսներին, մենք նզովում ենք Ներսէս Վարժապետեանին, որ թշնամի դարձրեց մեզ ռուսաց „մարդասէր" կառավարութիւնը, մենք հայհոյում ենք յեղափոխականներին, որոնք զայրացրին բարեգութ, հայրախնամ և մեծահոգի Աբդիւլ-Համիդին...

Մենք խելքացե՞լ ենք. մենք հրաժարւել ենք մեր ցնորքներից. մենք սառը դատող մարդիկ ենք դարձել. մենք „խոհեմութիւն", „զգուշութիւն", „դիպլոմատութիւն" ենք քարոզում ժողովրդին, — անորոշ բառեր, որոնք կը նշանակեն իսկապէս, „եթէ գայ ձեզ մէկը, որ խօսի ազգի, պատւի, իդէալի, սուրբ վրէժի մասին, բռնէք նրան և յանձնէք ոստիկանութեան, որպէսզի ակներև լինի ձեր հաւատարիմ հպատակութիւնը. եթէ քիւրդը գայ յափշտակելու ձեր ինչքը և պղծելու ձեր սրբավայրերը, համբուրեցէք նրա փէշը և գոհութեան ուղերձ ուղարկէք ձեր մոլլա-պատրիարքին, որպէսզի չթշնամացնէք համիդիէներին. եթէ թիւրք պաշտօնեան գայ ձեզ մօտ, հեռացէք տանից և պատւիրեցէք ձեր կանանց սիրաշահել թանկագին հիւրին, որպէսզի չգրգռէք հայի դէմ ազդեցիկ միւսիւլմաններին"...

Այդտեղ է հասցրել մեզ մեր խելքութիւնը, այդ Պիղատոսների խելքութիւնը, որ աշխատում է պահել իրեն հաւասարաչափ հեռու խաչող Ուժից և խաչւող ճշմարտութիւնից, այդ ստրկածինների խելքութիւնը, որ հրաժարւում է երկրորդ գնդակն արձակել աւազակի վրայ առաջինը վրիպելուց յետոյ, այդ ապուշ խելքութիւնը, որ երկրորդ անգամ չի ցանում արտը, որովհետև առաջին հունձը փչացել է կարկուտից...

Ժամանակ չէ՞ վերջապէս թքելու այդ գետնաքարշ խելքութեան վրայ և գրկելու վեհ, դէպի երկինք ձգտող խելօքութիւնը, որ բոլոր մեծ հոգիների, Վարդանների, Գարիբալդիների, Գլադստոնների, Վիկտոր Հիւգոների, Գամբէտտաների խելքութիւնն է և միան-

գամայն բոլոր աղնիւ, բոլոր սրտի և խղճի մարդկանց խելքութիւնն է, որքան և սահմանափակ լինեն այդ մարդկանց ուժերը, ընդունակութիւնները և ձիրքերը։

Ժամանակն է, վաղուց ժամանակ, որովհետև այդ խելքութեան, միայն այդ խելքութեան մէջ է մեր փրկութիւնը։

Ժամանակն է, որովհետև եթէ մի անգամ էլ աղաչող լինենք քաղաքական յարմար առիթում, կըսպանենք վերջնապէս հայկական հարցը, իսկ անպատճառ իբրև մուրացկան կը ներկայանանք և ապագայ դէպքում (որ կարող է միակը լինել այսուհետև), եթէ բոլոր հայերս, և ամէնից առաջ մենք, մեզ երկրի աղ համարող ինտելիգէնտներս, չլարենք մեր բոլոր ուժերը առաջ տանելու և աւելի ու աւելի հիմնաւորելու, աւելի ու աւելի ընդարձակելու համար յեղափոխական գործը Թիւրքիայում։

Շտապենք ուրեմն, որովհետև արագ արագ մօտենում է ճակատագրական ժամը, և ամէն րոպէ, որ մենք կորցնում ենք մեր անտարբերութեան մէջ, գերակշռութիւն է տալիս մեր ոխերիմ թշնամիներին։

Թօթափենք մեր վրայից այդ անարգ անտարբերութիւնը, եթէ չենք ուզում, որ ապագայում ինտէլիգէնցիայի անունը դառնայ արատի, ամօթի և նզովքի անուն։

Օսմանեան Հայաստանը կուում է, Օսմանեան Հայաստանը օգնութեան է կանչում. այնտեղ են մեր եղբայրները, թշուառ հայ ազգի ամէնաթշուառ անդամները. այնտեղ մենք իրաւունք ենք ձեռք բերել արդէն, արիւնով և դաշնագրերով հաստատուած միջազգային իրաւունք, որ խոստանում է մեզ վերջապէս ազատ մի անկիւն, ուր հայը չի համարուիլ „գեաւուր", „արմեաշկա" կամ „թափառական հրեայ", այլ մարդ, մարդ օժտուած մարդկային բոլոր իրաւունքներով. այնտեղ է բաբախում այժմ մեր ցեղի սիրտը, այնտե՛ղ է ծածանում յեղափոխական դրօշը, որ իր ծալքերում կրում է մեր ազգի պատիւը և ազատութիւնը։

Խմբւենք այդ դրօշի շուրջը. ցոյց տանք Եւրոպային, որ մենք ուժ ենք, թէև փոքր ուժ, բայց ոչ անօգուտ մեծ ուժերի մրցման մէջ. ստիպենք սուլթանին իրագործել ռէֆորմների ծրագիրը, մեծ պետութիւններից առաջարկուած և իր հաւանութիւնը ստացած ծրագիրը, որ սաղմն է լինելու Օսմանեան Հայաստանի ինքնավարութեան։

Դէպի յեղափոխական դրո՞շը, ինտէլիգէնտ եղբայրներ։

Կովկաս, 5 սեպտեմբեր

ՀԱՅ ԻՆՏԷԼԻԳԷՆՏ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՄՈՒՇԷՆ

—

10 յուլիս 1899

Մուշի և Սասունի մէջ գարունէն իվեր կատարուած ուշադրութեան արժանի գլխաւոր անցքերն են՝ որ կը փութանք հրատարակութեան տալ։

Սասունը սուլթանին աչքի փուշն է եղած. չի կրնար բնաւ հանդուրժէր, թէ հոն հայեր կան ու կը մնան, թէ այդ տեղէն երբեմն խլրտումներ և յուզումներ ծագած են, ու իր հանգստութիւնը խռոված։ Քանի մը փորձեր կատարեց՝ այդ լեռներէն վար իջեցնելու Սասունի ժողովուրդը. բայց երբ շօշափեց տեղացիներուն կարծիքը, առժամապէս ետ կեցաւ այդ ծրագիրն իրագործելէ։ Սասունցին պատրաստ է կրկին կոտորուի, ոչնչանայ, քան հեռանայ իր սարերու ու քարերու մէջէն։

Բայց անցնինք դէպքերուն։

Ծանօթ գործիչ ԳՈՒՐԳԻՆ ժողովուրդը անձամբ այցելելու և ոգևորելու համար դաշտ իջած էր. քանի մը տեղ հանդպելէ ետքը՝ ապրիլ 21-22-ին կը հասնի Ցրօնք գիւղ, ուր կը գտնէ մեր ֆէդայիներէն երեքը՝ ասոնք օր առաջ մասնաւոր տեղեկագրերով ու նամակներով ճամբայ ելած էին արտասահման անցնելու և իբրև պատգամաւոր մեր կողմէն վճռական առաջարկներ տանելու։ Դեռ յայտնի չէ մեզ, թէ ի՞նչպէս կամ որո՞ւ միջոցով գաղտնիքը Երևան եկած է, — միայն այսքանը գիտենք որ Մուշէն Բաղէշի կուսակալին հեռագրով իմաց կը տրուի ֆէդայիներու ներկայութիւնը Ցրօնք։ Կուսակալը առանց րոպէ կորսնցնելու Մուշի երևելիներէն և ժողովուրդի արիւն ծծողներէն Տալիպ էֆէնտին հեծելազօրքի հրամանատարին և մօտ 200 զօրքի ընկերակցութեամբ կը ճամբէ Ցրօնք։ Ասոնք գիւղը հասնելուն պէս լուր կը խրկեն անմիջապէս շրջաբնակ քիւրդ գիւղեր, և դեռ ժամ մը չանցած կը հասնի սովալլուկ ամբոխը, որ արդէն սովոր՝ միայն առթի և հրամանի կըսպասէ հայը կոտորելու ու թալանելու։ Տալիպ էֆէնտին իր վայրագ արարքներով այնքան կը նեղէ գիւղացիները, այնքան գազանութիւններ գործ կը դնէ անոնց վրայ, որ ճարահատ՝ ֆէդայիներու տեղը ցոյց կուտան։ Ապրիլ 25-ի կէսօրն անցած էր երբ Գուրգէն իր ընկերներուն հետ կը պաշարուի մարագի մը մէջ։

Կ՚ըսուի թէ նախապէս հայերու կողմէն լուր տրուած էր իրենց թէ „Անհոգ մնացէք, գիւղը նաւթ չկայ, կրակի չեն կրնար բռնեն ձեզ"։ Գիտնալով Գուրգէնի անձնուիրութիւնը, մեր ֆէդայիներուն անօրինակ ուժն ու քաջութիւնը, հաւանական է ենթադրել, որ վճռեր էին սպասեն ու կուեն մինչև իրիկուն և ապա մութին դուրս գան մարագէն։

Ֆէդայիները պինդ պաշարուած են։ Զիաւոր ոստիկան մը լուր կը տանի Մուշ, և այնտեղի զօրքն ալ կը հասնի օգնութեան։ Այդ խուռն բազմութիւնը դեռ չի համարձակիր մօտենայ, միայն հեռուէն հրացանի բազմաթիւ գնդակներ կը թափէ կարկտի պէս՝ մարագի դռան ուղղութեամբ։ Գուրգէնը վերջին խրախոյս մը տալով, կ՚առաջարկէ որ երգ սկսին։ Գնդակներու սուլոցին կը միանայ ֆէդայական ռազմերգը.

Կուեցէ՛ք, տղե՛րք, կուեցէ՛ք քաջ քաջ.
Ահա քրդերը փախչին սարսափած ...

Եւ քիչ մը ետք՝

Մնաք բարե՜ւ սուր, հրացան,
Մնաք բարե՜ւ, ընկերներ...

Ֆէդայիներու ներդաշնակ և խրոխտ ձայնէն մինչև իսկ հրամանատարը կը յուզուի ու կը հրամայէ որ պահ մը դադրեցնեն հրաձգումը։ „Երանի՜ թէ միայն երդ գէին ու չկուէին" կը գոչէ։ Մեր անվեհեր ընկերները կը շարունակեն կռիւը և կըսպասեն արևի մտնելուն, բայց աւա՜ղ, հաշիւնին դերև կ՚ելլայ. մօտակայ գիւղէ մը քիւրդերը նաւթ կը հասցնեն ու մարագը կրակի կուտան։

Մարագը կը բռնկի, մուխը կը լեցի ներս։ Կրակ ու ծուխով շրջապատուած՝ ֆէդայիները կը վճռեն դուրս գան։ Դրան սեմին վրայ առաջին նահատակը կ'ըլլայ ՓԱՐՍԱԴԱՆԸ։ Միւսները կը յաջողին մինչև դուռը կ'ելլան կուելու համար։ Բայց ինչ ընէ ութը՝ ութ հարիւրի դէմ, երբ չկայ պատնէշ մը, երբ չկայ դիրք մը, մինչդեռ թշնամին՝ պատնէշներու ետևէն՝ պատրաստ կը սպասէ մարագի դուռը նշան առնելու։ Հարիւրաւոր գնդակներ միաթափ կը տեղան և հոն՝ իրարու ետևէն կ'իյնան, ՌՈՒԲԷՆ, ՏԻԳՐԱՆ, ՆՇԱՆ, ՎԱՐԴԱՆ, ԿԻՊՈ։ ԳՈՒՐԳԷՆԸ թէև վիրաւոր, կը յառաջանայ բաւական տեղ, բայց ուժասպառ՝ կը նստի ձորակի մը եզրը քարի մը վրայ ու իր վերջին գնդակները կ'արձակէ. . . .

Բայց այդ առիւծները անվրէժ պիտի չմեռնէին. այնքան շունչ, այնքան արև ունեցան, որ արիւնթաթաւ ձեռքերով գետին տապալեցին հրէշ Տալիպը, հրամանատարին աներձագը՝ Հասան պէյ, չորս զինուոր և չորս քիւրդ։ „Կեցցէ՛ յեղափոխութիւն, կեցցէ՛ հայութիւն" եղաւ իրենց վերջին աղաղակը։

Ֆէդայիներէն մէկը բուլանըգցի ՄԿՐՕՆ աննկարագրելի քաջութեամբ ճեղքելով պաշարող զօրքի շարքերը՝ մօտ երկու ժամու ճամբայ կը կտրէ ու կուելով կը հասնի Մեղրագետի եզերքը։ Արիւնախում թշնամիները չեն համարձակիր մօտենան հայ ֆէդայուն, թէև մենակ է ու առանց ընկերի։ Այդ միջոցին Մեղրագետի միւս եզերքէն կ'անցնէր Մուշէն Ցրօնք օգնութեան գնացող խառնիճաղանճ խումբ մը։ Երբ կը նշմարեն Մկրօն, առաջը կը կտրեն. ֆէդային անկարող է այլ ևս այդ ամբոխը ցանցրիւ ընելու. սպառած են փամփուշտները. . . և վիրաւոր գետին կ'իյնայ։ Երբ կը մօտենան իրեն՝ ծունկի կուգայ ու ցոլացնելով սուրը որոտաձայն կը պօռայ. „Եկէ՛ք, ձեր պատիժը այս ձեռքերէն պիտի առնէք"։ Վատերը սիրտ չեն ըներ հարկաւ և հեռուէն հրացանով կը սպաննեն քաջը։

Վայրենի ամբոխը իր զայրոյթը կը թափէ անշունչ դիակներուն վրայ։ Գուրգէնին գլուխը կը կտրեն կը տանին իբր յաղթանիշ մը։ Ապրիլ 26-ի առտուն նահատակներուն մարմինները բերին Մուշ և կառավարանիստ շէնքին առջև թողեցին, արևու տակ, օրնիբուն։ Իրիկուան դէմ առաջնորդարանէն բերել տալով քահանայ մը՝ հրամայեցին որ կրօնական արարողութիւնը կատարէ։ Ոստիկաններուն հսկողութեան տակ մշակներ շալկեցին քաջերուն մարմինները ու տարին քաղաքին հարաւ-արևելեան գերեզմանոցը, ուր առանց պատանի թաղեցին անկիւն մը՝ քով քովի։ Բայց տարօնցին գուրգուրանքով պիտի պահէ անոնց անշուք շիրիմները ապագայ սերունդներու յարգանքին համար. . .

Այդ օրը Մուշի սգաւոր հայ ժողովուրդին միակ մխիթարութիւնն էր իրենց աչքին առջև փուած տեսնել Տալիպին սատակը, որուն վրայ անհուն վայնասուն և լացուկոծ կ'ընէին թիւրքերը։ Անպատում են անոր չահատակութիւնները, գազանութիւնները ու սիստէմական հարստահարութիւնները. Մուշի ժողովուրդը միայն կրնայ գնահատել Տալիպի մահուան արժէքը։ Այդ արիւնկզակը դեռ վերջերս Բաղէշ երթալու միջոցին, դաշտի քանի մը հայ գիւղերը մտնելով կ'ըսէ. „Ապաշխարեցէ՛ք, ձեր կրօնական արարողութիւնները կատարեցէ՛ք. վերադարձիս վճռեր եմ կոտորել տամ հայերը"։ Վերադարձաւ, և ֆէդայիներուն օրհնեալ գնդակը այդ պատուհասէն ալ ազատեց Տարօնը։

Ակներև է թէ այս դէպքին ատեն Ցրօնք գիւղը զերծ պիտի չմնար կոտորածէ, թալանէ։ Այն պահուն՝ երբ մեր քաջերու գնդակներէն վիրաւոր կը գլտորուէին սուլթանին զինուորները, ասոնց մէկ մասը միացած խուժանին հետ, իր կատաղութիւնը կը թափէր խեղճ ցրօնցիներու վրայ։ Կը սպաննեն գիւղապետ Վարդանին եղբայրը՝ Դաւօն. կը սկսի իրարանցում ու փախուստ. սիրտ պէտք էր որ դիմանար այդ սրտաճմլիկ տեսարանին. մայրերը իրենց մանր երեխաներ առած, ցիրուցան կը փախչին դաշտը, չեն գիտեր ո՞ւր դիմեն. վերջապէս շրջակայ հայաբնակ գիւղեր կ'երթան, ապաստան կը գտնեն։ Այր մարդիկ ամէն բան մոռցած՝ մոլորուած ոչխարի նման հոս ու հոն կը ցրուին։ Գիւղը աւարի կը տրուի. ո՛չ ուտելիք, ո՛չ գոյք կը մնայ, մինչև անգամ շուներն ալ կը տանին։ Ցրօնքը դաշտի նշանաւոր և ամէնահարուստ գիւղերէն մէկն էր — 300 տունէ աւելի ունէր — և ահա՛ քանի մը ժամուան մէջ մոխիրի վրայ նստաւ. . .

Կառավարութիւնը շուտով հասկցաւ սակայն որ շատ հեռու գնացեր էր, և մէկ-երկու շաբաթ չանցած, զինուորներ ցրուեց այս ու այն կողմ և սկսաւ ցրօնցիները ժողվել ու յորդորել որ գիւղ վերադառնան, կրկին աշխատին, կրկին վաստակին. . . Ցրօնքի աւերն ու տառապանքը բաւական չէր, կառավարութիւնը ձերբակալել տուաւ գիւղին երկու քահանաները, նախկին ռէս Սըլօն և որդին Ստեփանը, մարագի տէրն ու կինը, քանի մը ուրիշ անմեղ գիւղացիներ ալ՝ ամբողջը տասնումէկ հոգի. խեղճերը դեռ կը հիւծին բանտին խորքը։

Այս անմոռանալի դէպքէն ետք սկսաւ ընդհանուր սարսափ, թալան, սպանութիւն. անխտիր որ հայուն որ պատահէին՝ կը սպաննէին, ինչ գիւղի գոյք կամ գոմէշ ու եզ տեսնէին՝ կը տանէին։ Ինչպէս վերև ըսի, մխիթարական կէտը հայերուն համար Տալիպի սատկիլն էր. անոր մահը մեծ կորուստ էր կառավարութեան համար և մեծ զայրոյթ ու գրգռում առաջ բերաւ թիւրքերուն մէջ. „Հարիւր հազարաւոր հայերու արիւնը թափենք, նորէն Տալիպի վրէժը չի լուծուիր", կ'ըսէին իրարու։ Վայրկեանէ վայրկեան կոտորած կը սպասուէր. հայերը շուկայ, խանութ թողած, քաշուած էին տուներնին, թիւրք ամբոխը միայն հոծ բազմութեամբ փողոցներու մէջ կ'երևէր։ Թէև այդ դէպքէն ետք, շնորհիւ վեհափառ սուլթանին, իբր թէ անդորրութիւն տիրեց, ամէն մարդ դարձաւ իր գործին, բայց կարճ տևեց. օր մը ևս յանկարծ իրարանցում և փախուստ սկսաւ. Մշոյ-Զորի թաղեցի Շահէն անուն վաճառականը, Տալիպի տան առջևէն անցած ժամանակ, տեսնէն քանի մը զինեալ թիւրքեր դուրս կուգան և կը սպաննեն խեղճ մարդը։ Առաջնորդական փոխանորդ Վարդան վարդապետն ալ կառավարութեան դռնէն դուրս ելլելուն, ետևէն դաշոյնով քանի մը անգամ սպանութեան փորձեր կը կատարուին, բայց քանի մը թիւրք պաշտօնեաներ տեղը անյարմար դատելով՝ կ'արգիլեն։ Իրարու ետևէ սկսաւ դաշտի մէջ երևելի անձերու սպանութիւններ։ Ապրիլ 28-ին կէս օրուայ պահուն քանի մը քիւրդեր Հիւր կուգան Ալվառինճ գիւղի ռէս՝ Վահան անուն հարուստ երիտասարդին տունը, ուր նստած կը գտնեն երկու

ոստիկաններ ալ։ Երբ Վահանը տուն կը դառնայ անկողին բերելու քիւրդ աղաներուն, ետևէն հրացանի գնդակներ ուղղելով՝ գետին կը փռեն խեղճ երիտասարդը և իրենք անհոգ կը հեռանան։ Ներկայ եղող ոստիկանները ուրախութեամբ կը դիտեն այդ սպանութիւնը ու կ'անցնին կ'երթան։ Նոյն ձևով սպաննեցին Շմլակ գիւղի Մելքիսեդեկ քահանան։ Աւազաղբիւր գիւղէն աղքատիկ մայր մը իր 10-12 տարեկան զաւակին հետ գնացած էին դաշտէն բանջար բերելու. երբ վերադարձը կ'ուշանայ, գիւղացիք կ'երթան փնտռելու, և անոնց դիակները կը գտնեն. բարբարոսները 24 տեղէն վիրաւորեր էին փոքրիկ պատանին։ Սպաննեցին Առնիս գիւղի ռէս Սօղոն, Թիլ գիւղի Խաչօն և երկու քահանայ։ Ս. Կարապետի մօտիկ մորթոտեցին երեք մարդ։ Ապրիլ 26-ին Աղճան գիւղ աւարի աւին և երեք հոգի սպաննեցին։ Մայիս $^{2}/_{14}$-ին Ծխավու և Կուրավու գիւղերուն լուծքի դաւարները։ Բերդակ գիւղի ամբողջ ոչխարները տարին և սպաննեցին Տօնօ անուն հայը։

Ցրօնքի դէպքին առթիւ պաշտօնական եղան տեղիս մութէսարիֆը (կառավարիչ), անհոգ գտնուելուն համար, և առաջնորդական փոխանորդը իբր յեղափոխականներու ընկեր և անոնց շարժումներուն տեղեակ ըլլալու ամբաստանութեամբ։ Բաղէշի կուսակալը Մուշ եկաւ իբր թէ քննութիւն կատարելու և կը բնակի Տալիպին տունը, սակայն հայու բողոքն ու ձայնը անլսելի է. „Ես չեմ կրնար ձեզի պահպանել" կ'ըսէ ու կը ճամբէ։

Կը խօսի իբր թէ կուսակալը հրահանգ տուած է անհետացնեն գաւառի մէջ աչքի զարնող անձնաւորութիւններ — և ահա կ'իրականանայ։ Կուսակալը Մուշ գալուն պէս անմիջապէս 200-էն աւելի զօրք խրկեց Սասուն, հայերը քրդերուն դէմ պաշտպանելու պատրուակով։ Զօրքը հոն հասաւ չհասաւ Գէլիէկուզան, Սէմալ, Շէնըք, և միւս գիւղերուն մէջ սկսաւ գազանային հարկահանութիւն մը։ Նպատակին է դառն ճնշումներով այդ անօթի ու ծարաւ ժողովուրդը իր դիրքերէն քանդել, հանել ու ցիրուցան ընել։ Վերջերս Սասունի մէջ երեք նշանաւոր քիւրդեր անյայտացած էին, և ահա ասոնց փոխարէն սպաննեցին Հեթինք գիւղէն եօթը մարդ և Դալլորիկի կողմերն ալ տասնէն աւելի։ Հեթինքը այրեցին և աւարի ալ տուին։ Մայիս $^{7}/_{19}$-ին փողոտեցին ս. Աղբիւրիկ վանքի Ղազար վարդապետը, իսկ կառավարութիւնը բռնի ստորագրութիւն առաւ վանքի միաբանութենէն՝ թէ վարդապետը սպաննուած է հայ ֆէդայիներու ձեռքով։ Բուլանըգի Խոշ-Գեալտի գիւղը ամբողջովին աւարի է տրուած. գիւղի գղիրն ու քանի մը ուրիշ գիւղացիներ սպաննուած են իբրև ֆէդայիներ։ Երեք հոգի ալ Կոբ սպաննուած է։ Այս պահուս լսեցի որ կուսակալը՝ հրաման ըրեր է Սասունի գիւղերուց գլխաւորներ Մուշ տանին, մօտ 22 հոգի։

Ալ տարակոյս չկայ, որ կուսակալը բարձրագոյն հրամանով և հրահանգներով եկած է, փոթորիկ մը առաջ բերելու և կրակ մը վառելու ժողովուրդի գլխուն. առիթներ կը փնտռէ միայն։ Ժամանակ ու միջոց չունինք յականէ յանուանէ և մանրամասն թուելու կատարուած սպանութիւնները, խժդժութիւններն ու գազանութիւնները. այդ բոլորը եթէ ցարդ դիմակի ներքև և գիշերով կը կատարուէր, այժմ ցորեկով տեղի կ'ունենայ անարգել և բոլորովին բացարձակ։ Մէկ ամսուան մէջ սպանութիւններու թիւը հարիւրը անցաւ արդէն... Զեմ ուզեր թեմ կիներու և աղջիկներու առևանգումները և հարկահանութիւնը իրենց յարակից քստմնելի արարքներով — այդ ամէնը սովորական բաներու կարգն անցած է...

Ահա մեր կացութիւնը. գոյք, ստացուածք չմնաց. պատիւնիս անարգուած է, սովը կը սպառնայ, կեանքը դժոխային է. փախչելու ալ միջոց չկայ...

ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ

30 օգոստոս 1899

Մեր խոստումին համաձայն—թէև բաւական ուշ—աւելորդ չենք կարծեր քանի մը մանրամասնութիւններ հաղորդելու այն կատաղի ընդհարման մասին, որ 18 զինակիր ընկերներ յունիս ամսուն ունեցան քիւրդերու հետ Խոշաբ գաւառին մէջ։

Զինակիր խումբը կը հանգստանար Բադիզար (Պաղի դաշ) լեռան դիմաց գտնուող բլրի ստորոտը, ձորին մէջ։ Գիշերուան ժամը մէկն էր արդէն։ Ընկերներէն երկուքը, որոնք ջուրի գացած էին, յանկարծ շան հաջիւն կը լսեն։ Անախորժ անակնկալ մը՝ չէին գիտեր թէ քիւրդերը վրան զարկած էին հոգ։ Քիւրդերու ներկայութիւնը ստուգելով՝ խումբը կ'որոշէ ապահով դիրք բռնէ ու կը բարձրանայ բլուրը, ուր կը հասնի լուսաբացին։ Այդտեղ կը յուսային թէ աննկատելի մնան և գիշերը շարունակեն ճամբանին։ Բայց պատահմամբ հոն գտնուող քիւրդ մը կը տեսնէ ֆէդայիները ու վախէն կը պահի քարի մը ետևը։ Քիւրդին ներկայութիւնը գաղտնի չի մնար երկար. խումբը իր դիրքը քննելու ատեն կը նշմարէ թագնուած թշնամին և կը ջանայ բռնել. — հրացան չեն արձակեր իրենց գոյութիւնը չմատնելու համար — քիւրդը կը պրծնի սակայն ձեռքերնուն և կ'երթայ լուր կուտայ։

Օգնութեան աղաղակի վրայ մերձակայ վրաններէն իսկոյն 25 ձիաւոր քիւրդ կը փութայ բլուրը։ Ֆէդայիները տեսնելով որ կռիւն անխուսափելի է, անմիջապէս կ'որոշեն թողնեն իրենց դիրքը — որ կուելու աննպաստ էր — և փութով կ'աճապարեն Բադիզար լեռան գագաթը։ Չորս ընկերներ փութով տեղ կը հասնին ու դիրք բռնելով՝ հրացան արձակել կը սկսին ձիաւորներու վրայ, որպէսզի ետ կեցնեն ասոնք և միջոց տան միւս ընկերներուն լեռ բարձրանալու։ Այդպէս ալ կը յաջողին, և քիւրդերը երեք կորուստ տալով կը ձգեն կը փախչին։ Խումբը այդ փախուստէն կ'օգտուի և լեռան գլուխը ապահով դիրք կը բռնէ, սպասելով թշնամու գալուն։

Կէս ժամ հազիւ անցած՝ քանի մը հարիւր քիւրդ կը խմբուի լեռան ստորոտը։ Կըսկսի կատաղի կռիւ մը, որ քանի մը դագաղներով կը տևէ մինչև իրիկուան մութը։ 18 զինակիրները այդ օր մօտ 1500 գնդակ արձակած են։ Երկու ընկեր զոհ կ'երթան՝ սպարկերցի ՍԻՄՕՆԸ որ ճակատէն մահացու վէրք կըստանայ, և կուռուբաշցի ԿԱՐԱՊԵՏԸ (Կարօ) որ սրտին ստանալով գնդակը, վայրկենաբար կ'աւանդէ հոգին։

Երկուքն ալ իրենց անխոհեմ յանդգնութեան զոհերն են. երբ քիւրդերը խոշոր քարերու ետևը թագնուած՝ դիրք բռներ կըսպասէին, այս երկուքը իրենց դիրքերէն կը բարձրանան որ քարերու ետև ապաստանած քիւրդերուն նշան առնեն, և իրենք կը զարնուին։

Թշնամին 60 հոգի կորուստ ունեցաւ։

Մութն իջնալուն՝ քիւրդերը կը քաշուին, և խումբն ալ կը պատրաստուի խաւարէն օգուտելով հեռանայ ու հետքը կորսնցնէ։ Բայց Սիմոնը հոգևարքի մէջ է դեռ և ահռելի կերպով կը չարչարուի. ընկերները կը խորհին որ եթէ այդպէս թողնեն երթան, քիւրդերը պիտի գան տանջեն զինքը, ուստի ընդհանուր համաձայնութեամբ գնդակով մը վերջ կը դնեն նահատակին տանջանքներուն... Այդ տխուր պարտքը կատարելէ ետք խումբը կ'իջնէ հիւսիս-արևմտեան ուղղութեամբ։ Քանի մը քիւրդեր, որոնք քարերու ետև թագնուած կըսպասէին, խումբին հեռանալը նկատելով 4 հրացան կը պարպեն անոր վրայ. ընկերներէն մէկը կը վիրաւորուի ազդրէն. վէրքը անվտանգ էր, իսկոյն կը կապեն և ճամբանին կը շարունակեն։

Խումբը կը հասնի Զէնիսի Հաշու (°) ձորը ու դիրք կը բռնէ։ Ամբողջ օրը կը հանգստանան այդտեղ։ Երիկւան դէմ, արևի մտնելուն 3 ժամ մնացած, քիւրդերը կը հասնին ու կը շրջապատեն, և այս անգամ կանոնաւոր զօրքի վաշտ մը իրենց հետ։ Չորս ժամ կը տևէ անհաւասար կռիւը. ֆէդայիները ստէպ-ստէպ կը փոխեն դիրքերնին, տեղի անյարմարութեան պատճառով։

Օրը մթնելուն, կռիւը կը դադրի, և խումբը իսկոյն ճամբայ կ'ելլէ։

Ազդրէն վիրաւոր ֆէդային խումբին հետ քալելու անկարող ըլլալուն՝ ուրիշ ընկերոջ մը հետ ետ կը ճամբեն զինքը, մէկ հրացան մըն ալ տալով իրենց ապահովութեան համար։ Ասոնք անվտանգ տեղ հասած են։

Իսկ զինակիր խումբը յաջողութեամբ կը շարունակէ իր ճամբան դէպի ներս և այս անգամ առանց հետք մը թողնելու։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԷՆ

5 (17) սեպտեմբեր 1899

Եւ Օրմանեան հրաժարեցաւ...

„Փատիշա՜հ, որովհետև իմ ներկայացուցած պահանջներէս և ոչ մէկը գոհացում չստացաւ — ես կը հրաժարիմ“։ Աս է հրաժարականին միտքը։ Ու այժմ Օրմանեան մտեր է իր խուցը, դուրս չ'ելլար, ինչպէս „արքը չի լէ կը մտնէ ձմեռը“. մինակ իր վեհափառ ստորագրութիւնը կը դնէ պաշտօնական թուղթերուն տակ և ուրիշ՝ ոչինչ։

Եւ ինչո՞ւ պիտի չընէր, երբ այդ մէկ հարուածով երկու նպատակի կարելի է հասնիլ։ Մէկ նպատակն է, ըստ Օրմանեանի փտած աստուածաբանական ուղեղին՝ միամիտ հայերը անդորրել, անոնց աչքին բարձր դիրք մը ստեղծել, իսկ միւսը՝ իր սիրած փատիշահէն ոսկոր մը փրցընել, նէր մը առնել։

Սուլթանը պատասխանած է Օրմանեանին, որ իր ամէն պահանջները կատարուած են արդէն... ու հրաւիրած է կազմեն 3 հոգիէ յանձնախումբ մը, հայոց փաթրիկին պահանջներն ու բողոքները քննելու համար։ Յանձնախումբին 3 անդամներէն մէ կը իբր թէ հայ է, որովհետև Արթին փաշա կը կոչուի։ Միւսները արդէն թիւրքեր են։ Ալ դուք հասկցէք մնացածը։ Հինցած ու լի՛ր կատակերգութիւն մըն է որ կը խաղցուի վերստին։

18 սեպտեմբեր

Խայտառակ, անամօթ խաղ մը, ճիզուիթական ֆարս մը... այդ հրաժարականը։

Իրողութիւնը հետևեալն է։

Գոմէշի կաշիէն աւելի կարծր երես ունեցող Օրմանեան, վատերուն յատուկ վախկոտութեամբ, կը սոսկայ, կ'ընկճուի ամէն կողմէ իր գլխուն տեղացող սպառնագրերէն և հանճարեղ միտք մը կը յղանայ։

Շրջաբերական մը կը գրէ և նիստի կը հրաւիրէ Խառն ժողովի բոլոր անդամները. „Անպատճառ ամէն մարդ ներկայ ըլլալու է կարեւորագոյն եւ ստիպողական խնդրի մը համար“ և այլն։ Շրջաբերականը ցրուելու կ'ըլլայ բոլոր ժողովականներուն, իսկ ձեռքի տակէ կ'իմացնէ Պէրայի կառավարիչ Էնվէր պէյին, որ կերպով մը ձեռք անցընէ անոր մէկ օրինակը... Էնվէր պէյ կը ճարէ օրինակ մը, կը կարդայ և կանխագոյն համաձայնութեան մը համեմատ, պալատ կը վազէ. „կարևորագոյն, ստիպողական խնդիր“ — ի՞նչ կրնայ ըլլալ... հրաժարականի խնդիրն է...

Սուլթանը կը կանչէ իսկոյն Արթին փաշան խիստ հրամաններ կուտայ ու կը ճամբէ ժողովի։

Ամէնքը կը գումարուին։ Պատրիարքը կը բանայ նիստը։ „Ասանկ ծանր պարագաներու մէջ ես անկարող եմ... երբ իմ ձայնս չի լսուիր“...

Արթին փաշան կ'ընդհատէ խօսքը. կ'ելլայ տեղէն ծանր-ծանր և ողբերգական, ազդու ու լուրջ շեշտերով կ'արտասանէ. „Ով իր բերնէն հանէ հրաժարական բառը՝ „տէօվլէթէ խային“ կը նկատուի. ա՛ս է վեհապետիս հրամանը“։ Կը նստի։ Թէ պատրիարք, թէ ժողովականները կատու կը դառնան, և ափ իբերան կ'ելլան կը ցրուին իրենց տուները, առանց բառ մը արտաբերելու։

Խաղը կը յաջողի։ Ո՛չ բերանացի, ո՛չ ալ գրաւոր հրաժարական չկայ մէջտեղ. բայց... ո՞վ ծիծաղ, Օրմանեան ասոր անոր կ'ըսէ թէ ինքը ա ն ձ ա յ ն հ ր ա ժ ա ր ե ա լ մըն է...

Ա ն ձ ա յ ն հ ր ա ժ ա ր ե ա՛լ... ասալ նոր գիւտ մը։

Օրման-Տատեան այս լկտի կատակերգութեան վրայ ձերբակալումները նորէն բազմացան։

„Արտասահմանէն արդէն 3 ամիսէն աւելի է, որ հայոց փաթրիկը սպառնագրեր կըստանայ—խորհեցաւ կառավարութիւնը,—եթէ հրաժարող էր՝ շատոնց հրաժարած պիտի ըլլար. ուրեմն միայն արտասահմանը չէ. վերջերս ասկէ ալ վճռական ազդարարութիւն մը եղած ըլլալու է“...

Այս տրամաբանութեամբ է որ ոստիկանութիւնը մարդ չի թողներ՝ որ ծակը չխոթէ...

Օրմանեանին աչքը լո՞յս։

*

Թիւրք շրջանները խիստ մտահոգ են. չարագուշակ լուր մը կը պտտի. Պետերբուրգի և Լոնդոնի դահլիճներուն միջև բուռն բանակցութեան մը ձայները կուգան հոն, ու ան ալ նեղուցներու՝ Դարդանէլի և Բոսֆորի խնդրի մասին։ Խօսք կը դառնայ թէ ռազմանաւերուն ազատ անցուդարձ պիտի թոյլատրուի և պատերազմի ատեն ալ երկու պետութիւններու նաւատորմերուն բռնելիք դիրքը որոշուի։

*

Անցեալ օր գերմանական շոգենաւ մը քարափին մօտեցնելու համար փոքրիկ նաւաձիգ մը կ'օգնէր, շղթայէն ձգելով։ Մեքենագործին մէկ վճռական սխալին վրայ՝ նաւաձիգին կաթսան պայթեցաւ. փոքրիկ նաւը իսկոյն ընկղմեցաւ և վրայի 5 բանուորներէն մէկ քանին պայթիւնէն սպաննուեցան, միսները ծովը խեղդուեցան։

Պայթիւնը զարհուրելի էր. Ղալաթիոյ նաւամատոյցէն մինչև Ղալաթիոյ աշտարակը, մինչև Ստամբօլ, մինչև Իւսկիւտար որոտը թնդաց։ Թիւրք խանութպաններն ու խուժանը, որ ամէն դժբախտութեան մէջ հայու մատ կը տեսնան, 96-ի պանքային ռումբերուն կրկնումը կարծեցին ու իսկոյն զէնքի դիմեցին. մօտ 16 կէտերու վրայ զինուած մարդեր երևցան։ Քայլ մը մնացեր էր որ արիւնալի տեսարանները կրկնուէին։

Իսկ հայերը ոչխարի պէս կըսպասեն մսագործի դանակին. գէթ ատրճանակ մը գնէին, անձնապաշտպանութեան փոքրի՛կ միջոց մը ձեռք առնէ՛ին...

*

Ձերբակալումները եռապատկուած են նաև Թիւրքերուն մէջ։

Թունալի Հիլմի անուն երիտասարդ-Թիւրքը վերջերս շրջաբերական մը է հրատարակեր որ բազմաթիւ օրինակներով բաժնուեր է և հոս։ Այդ կոչը կը յայտարարէ որ այս տարի Իտալական Բրինդիզի քաղաքին մէջ երիտասարդ-Թիւրքերու համաժողով մը տեղի պիտի ունենայ։ Պալատը մեծ մտատանջութիւն կը տիրէ այս առթիւ։

Միայն Եըլդըզի մէջէն 30 հոգի դաւադիրներ կամ կասկածելիներ Ափրիկեան Թրիպոլիս աքսորուեցան Մահսուսիէի Թէֆիկ շոգենաւով։ Այժմ ալ կ'իմանանք թէ Իզմիրէն ալ նոյն նաւը լեցուցեր են ասկէ առաջուց խրկուած 40 աքսորականներ ևս...

25 սեպտեմբեր

Վերջապէ՛ս „անձայն հրաժարականիս" ձայնաւոր հրաժարական մը եղաւ։

Բաւական ատեն Օրմանեան տատանեցաւ. ի՞նչ ըներ, ո՞րմէ աւելի վախնար. սուլթանին բարկութենէ՞ն, անոր Երուսաղէմ աքսորէ՞ն, թէ ժողովուրդի բարկութենէն ու անոր գնդակով անդիի աշխարհ աքսորէն։ Երկունքը երկար տևեց և իվերջոյ ծնաւ հրաժարական մը։ Սեպտեմբեր 23-ին (հ. տ.), հինգշաբթի օրը, Պատրիարքարանի առաջին գործակատարը, տէր Ներսէսեան, բեռնաւորուած Օրմանեանի „ձայնաւոր" ու գրաւոր հրաժարականով՝ գնաց պալատ, Թագսիմ պէյի քով, որ անկէ ալ թուղթը հասցնեն Մարդասպանին ձեռքը։ Թագսիմ կը մերժէ՝ „Վեհապետը լսած է հրաժարականին լուրը և խիստ սրդողած. անոր բացարձակ իղձն ու հրամանն է որ Օրմանեան շարունակէ իր պաշտօնը"։ Տէր Ներսէսեան իր ստացած հրահանգին համաձայն, թուղթը կը թողնէ հոն ու կը մեկնի։

Միևնոյն ատեն Պատրիարքարանին երկրորդ գործակատարը հրաժարականին երկրորդ օրինակը կը տանի Արդարութեան պաշտօնատունը։ Նոյն միջոցին Եըլդըզէն տար հրաման կը հասնի հոն, որ մէկը խրկեն Օրմանեանը համոզելու։ Զիվէր պէյը նախարարին կողմէն կը փութայ Օրմանեանին տունը, Պէրա։ Պատրիարքն անդրդուելի կը մնայ ու կ'առարկէ որ մինչև օրս իր ըրած ամէն դիմումներու, իրեն եղած ամէն խոստումներու մէջ չարաչար խաբուեցաւ. շա՛տ բան խոստացան, բայց բան մը չկատարեցին։ „Մինչև որ իմ՝ առաջարկած չորս պայմաններս չընդունին և իրապէս չգործադրին՝ ինձ համար այլ ևս անհնար է պաշտօնս շարունակել"։ Խընդիրը դեռ այս վիճակին մէջն է։

Օրմանեանին չորս պահանջները շատ անգամ գրուած են թերթերու մէջ, բայց անգամ մըն ալ գրելը աւելորդ չէ անոնց ահաւոր ողորմելիութիւնը ցուցնելու համար։

1) Հայերու ազատ երթևեկութիւն Թիւրքիոյ մէջ (հարկաւ „կանոնաւոր" անցագրով). 2) Հին ու նոր բանտարկեալներու արձակում (իմա՛ ոչ սոսկ գողերու և ոճրագործներու). 3) Դէպքերու առթիւ կործանուած վանքերու վերաշինում և կորուստներու հատուցում (ո՞ւրկէ, ո՞վ...) և 4 Կիլիկիոյ կաթողիկոսի ազատ ընտրութիւնը ըստ առաջնոյն։ Ասոնք են Օրմանեանին երեւելի պահանջները...

Վերջին պահուն Պոլսէն 30 սեպտեմբեր (հ. տ.) հեռագիր մը լուր կը բերէ թէ սուլթանը իրադէով մը վաւերացուցեր է՝ Օրմանեանին պահանջները ընելու պաշտօն ունեցող Ցանծնաժողովին հետեւեալ առաջարկները.

1) Խափանել այն արտակարգ միջոցները, որոնք սահմանուած էին հայերուն երթեւեկը արգիլելու գաւառներուն մէջ, վերապահելով կասկածելի անձերուն միայն։

2. — Պետութեան աջակցութեամբ վերաշինել կամ նորոգել հայկական խառնակութիւններու ատեն քանդուած դպրոցները, եկեղեցիներն ու վանքերը։

3. — Ջարդերու ատեն սպաննուած կառավարական հայ պաշտօնեաներու առնելիքները վճարել։

4. — Պոլսի մօտ, Եէդիքուլէ, որքանոց մը շինել։

5. — 54 հայ բանտարկեալներ ազատ արձակել և 24 մահուան դատապարտուածներու ալ պատիժը ցմահ բանտարգելութեան փոխել։

Պատրիարքը — կ'աւելցնէ հեռագիրը — ետ պիտի առնէ հրաժարականը, քանզի իրադէն զոհացում կուտայ (՞) հայկական խնդրանքներուն (՞), թէեւ բարենորոգումներու (՞) գործադրումը տարակուսելի է։

Օրմանեանի շնորհիւ այն օրին հասանք որ անցագրով ճամբորդել, որքանոց շինել, էֆէնտիներու ամսականը վճարել տալ, քանի մը դահեկան հատուցում ուզել դպրոցի մը կամ վանքի մը համար — „բարենորոգում" ըսել է... Դեռ ան ալ հրաշք համարելու է եթէ իրագործուին։

ԽՄԲՐ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ԵՕԹԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 2 սեպտեմբեր

1896 թուի մայիս ամիսն էր, որ Պետերբուրգի „քաղաքական շրջաններում" — եթէ միայն այդպիսի անուն կարելի է տալ մեր „դռնփակ շրջան"-ներից ոևէ մէկին — լուր տարածուեց, թէ երկու պաշտօնական անձեր են գնում Կովկաս, քննելու „Հայկական տրամադրութիւնը", որ — պէտք է աւելացնեմ — այն ժամանակ օրւայ խնդիր էր մայրաքաղաքում...

Շուտով այդ լուրը ճշդուեց և պաշտօնական կերպարանք ստացաւ։ Գնացողներն էին՝ ներքին գործերի մինիստրութեան կողմից՝ նոյն մինիստրութեան պաշտօնեայ Մասալով, և անձնապէս թագաւոր կայսրի կողմից՝ իշ-

խան Էսպէր Ուխտօմսկին, որի մասին նախորդ նամակում արդէն մի քանի խօսք ասելու առիթ ունեցայ։

Դուք տեսնում էք, որ յանձնարարութիւնը վերին աստիճանի կարևոր էր, այլապէս կայսեր կողմից յատուկ անձ չէր ուղևորուիլ Կովկաս, որովհետև „յատուկ անձ“ ուղարկելը վերապահւած է առանձին կարևոր դէպքերի համար, այն էլ այնպիսի դէպքերի, որոնք սովորաբար մնում են իբրև պետական գաղտնիք և երբեք հրապարակական խօսակցութեան նիւթ չեն կազմում։ — Արդ, ո՞րն էր այդ կարևոր դէպքը։

Պատմեմ։

Հայոց հարցը մի կողմից և հայոց դպրոցների փակումը միւս կողմից — ահա առիթը, որ „հայկական տրամադրութիւնները“ մայրաքաղաքում ջերմ վէճերի նիւթ դարձան։ Նոյնիսկ պալատական շրջաններում գտնուեցին „անվնասներ“ մարդիկ, որոնք անպայման դատապարտում էին ներքին գործերի մինիստրութեան կարգադրութիւնը՝ փակելու հայ դպրոցները, մանաւանդ որ փակուող դպրոցների տեղ նոր դպրոցներ ոչ բացւում էին և ոչ էլ բացւելու յոյսեր կային։ Ներքին գործերի մինիստր Գօրեմիկին, որ, իդէպ ասած, իր պաշտօնավարութեան գլխաւոր փեշակը դարձրել է մարդիկ աքսորել, լրագրեր փակել և ամէն ձեռնարկ արգելել ստիպւած էր ամէն տեսակ հրէշային „վտանգներ“ հնարել՝ իր կարգադրութիւնները արդարացի ցոյց տալու համար։ Ահա այդ նպատակով էր, որ դպրոցների փակման իբրև գլխաւոր պատճառ՝ հրապարակ բերուեց այն մեղադրանքը, թէ նախ՝ այդ դպրոցներում „հակակառավարչական“ պրօպագանդա է լինում, և երկրորդ՝ այդ պրօպագանդան մեծ կապ ունի այն ընդհանուր համակրութեան հետ, որ Կովկասի հայերը սկսել են ցոյց տալ դէպի Անգլիան և անգլիական քաղաքականութիւնը...

Անգլիա՜ և անգլիական քաղաքականութի՜ւն, — օ՜հ, այդ երեք բառը արդէն հերիք էր, որպէսզի Պետերբուրգի մէջ ահագին շշուկ բարձրանար, որովհետև — երևի լսել էք — ամենախելացի ռուս մարդն էլ իր տրամաբանութիւնը կորցնում է, հէնց որ խօսք է բացւում անգլիական քաղաքականութեան մասին... Դուցէ, հին Ռուսաստանը այնքան չէր վախենում մօնգոլական արշաւանքից, որքան ժամանակակից ռուս դիւանագիտութիւնը անգլիական քաղաքականութիւնից։ Միջակ խելքի տէր ռուս չինովնիկը զարմանալի հասկացողութիւն ունի անգլիացու մասին. — Նրա կարծիքով, անգլիացին այնքան խորամանկ, հնարագէտ և հարուստ է, որ նրա հետ մրցում սկսել՝ կը նշանակի անխուսափելի պարտութեան հնթարկւել... Ահա թէ ինչու „անգլիական“ անուն յանկարծական կապը Կովկասի հայերի հետ, — և այն էլ այն ժամանակ, երբ թիւրքահայերի քաղաքական գոյութեան խնդիրը օրւայ առաջնակարգ խնդիր էր քաղաքական աշխարհում, — դող պատճառեց ռուսաց պօլիտիկոսներին, որոնք սկսեցին աւելի կատաղի կերպով կրճտել իրենց ատամները հայերի դէմ... Տարաբախտաբար այս „փափուկ բոպէին“ չգտնուեց և ոչ մի հատ խորաթափանց անձ, որ տեսնէր, թէ այդ նոր „քաղաքական բադն“ էլ նոյն քուրայի մէջ է ստեղծագործւած, որտեղ արդէն վաղուց թխւում էին ամէն տեսակ հրէշային մեղադրանքներ հայերի դէմ...

Անգլերուսական մրցման փաստը դուք լաւ գիտէք։ Դա պատմական իրողութիւն է։ Այն օրից, երբ ռուսաց և անգլիական շահերը ընդհարւեցին Պոլսում, այն օրից, երբ Մեծ-Բրիտանիան ձեռք բերելով Հնդկաստանը, քաղաքական դաւանանք դարձրեց՝ կտրել ռուսների ճանապարհը դէպի հարաւ, — այն օրից արդէն այդ երկու պետութիւնները դարձան անհաշտ։ Բայց ի՞նչ մաս ունեն այդ հարցում կովկասեան հայերը, — իրաւամբ կը հարցնէք դուք։

Իսկոյն կ'իմանաք։

Դուք լաւ գիտէք, որ 1878 թւին, ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ, Անգլիան վճռական պաշտպանութիւն ցոյց տւեց Թիւրքիային, և այդ պաշտպանութիւնը արտայայտւեց ոչ միայն նրանով, որ Անգլիան մատակարարեց Թիւրքիային փող, զէնք և զինուորական հրահանգիչներ, այլև նրանով, որ զինադադարից յետոյ, Բերլինի վեհաժողովի միջոցով, Բիկոնսֆիլդի կառավարութիւնը յետ մղեց ռուսներին Կարինից, որը նրանք արդէն գրաւել էին իրենց զօրքերի արիւնով, որպէսզի ոլքան կարելի է ռուսաց տիրապետութիւնը հեռու մնայ այն գծից, որ տանում է դէպի Պարսից ծոցը — անգլիացիների համար այդ կարևոր կէտը։ „Բայց դրանով — ասում են ռուս դիւանագէտները, — անգլիացիք չհանգստացան։ Նրանց իդէալն է մի անանցանելի պատնէշ դնել ռուսների արշաւանքի առաջ, և այդ պատնէշի գլխաւոր ամրութիւնները պիտի լինեն՝ Կ. Պոլիս, Սև ծովը, Կովկասեան լեռնաշղթան, Պարսկաստանը, Աւղանիստանը, Չինաստանը մինչև ռուսատեաց Ճապոնիան։ Այդ պատնէշով՝ Անգլիան կարող կը լինի ընդմիշտ փակել ռուսների ճանապարհը և ընդմիշտ ապահովել իր գերիշխանութիւնը Հնդկական ովկիանոսի վրայ և իր հարաւային կալւածքներում“։

Ահա այսպէս են պատկերացնում ռուս դիւանագէտները անգլիական քաղաքական պատնէշը, որի ամրութեան համար, նրանց կարծիքով, Բրիտանիան չի խնայում ոչ փող և ոչ էլ քաղաքական ինտրիգներ։ Եւ ահա այդ ինտրիգներն են, որոնք սկսել են գործել Կովկասում, գլխաւորապէս կովկասեան հայերի շրջանում։ „Վերջին տարիները, — շարունակում են պընդել անգլիատեաց ռուս քաղաքագէտները, — Անգլիան ձևափոխեց իր քաղաքականութիւնը Փոքր-Ասիայում, որտեղ նա ուզում է մի նոր, տեղական պատնէշ կազմել ռուսների դէմ՝ նոյնիսկ հայերից, ստեղծելով հայկական անկախ իշխանութիւն։ Եւ որպէսզի այդ պատնէշը աւելի զօրեղ լինի, անգլիացիները ուզում են ապստամբեցնել Կովկասը, որպէսզի այնտեղից յետ քշել տան ռուսներին, և այդպիսով ռուսաց տիրապետութեան բնական սահմանը դարձնեն Կովկասեան լեռնաշղթան — այդ բնականապէս ամուր և վստահելի գիծը“։

Տարակոյս չունեմ, որ իմ ընթերցողներից շատերը կը ժպտան այդ „քաղաքական անեկդոտի“ վրայ, բայց կարո՞ղ էք երևակայել, որ այդ „անեկդոտը“ շատ լուրջ բան է համարւում այժմեան ռուս դիւանագէտների շրջանում։ Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ դա նոյնիսկ պաշտօնական ձև ստացաւ։ Պատմում են, երբ Ալաշկերտում թիւրք զօրքը մի-երկու յաջողութիւն ունեցաւ և լուրեր էին պտտում, թէ օսմանեան զօրագունդը կարող է անցնել Իգդիրը և մտնել Երևանեան

նահանգը — Թիֆլիզում, զինուորական բարձր ատեանում, պաշտօնապէս քննւում էր այն ծրագիրը, թէ ինչպէս և որտեղ պաշտպանեն Կովկասի միւս կէտերը։ Այդ ծրագրի քննութեան ժամանակ լուրջ կերպով սեղանի վրայ էր դրւած այն հարցը, թէ անգլիական դրդմամբ Կովկասում ապստամբական ցոյցեր կարող են լինել, և ուրեմն կառավարութիւնը մի անգամից ստիպւած կը լինի կուռել երկու թշնամու դէմ, — թիւրք զօրքի և տեղական ազգաբնակութեան դէմ...

Եւ այդ այն ժամանակ, երբ ամբողջ Կովկասի քրիստոնեայ ազգաբնակութիւնը, մանաւանդ հայեր և վրացիք, ոչ միայն կռւում էին ռուսաց զօրքերի շարքում, այլև ցնծութեան անկարագրելի ցոյցերով էին ընդունում ռուսաց զէնքի ամէն մի յաջողութիւնը. այդ այն ժամանակ, երբ հայ զօրապետները — Լազարեվ, Լօրիս-Մելիքով, Տէր-Ղուկասով, Շելկովնիկով — Ալաշկերտի, Կարսի, Կարինի կողմերում շլացուցիչ փայլ էին տալիս ռուսաց զօրքին, և նոյնիսկ թիւրքահպատակ հայերը թափօրով էին ընդառաջ դուրս գալիս ռուսաց զօրքին։ Որպիսի՜ աններելի մոլորութիւն։ Դեռ լաւ է, որ այդ մոլորութիւնը շուտով պարզւեց, և կառավարութիւնը, գոնէ պատերազմի ժամանակ, համոզւեց, որ իր կասկածները անհիմն են և անտեղի...

Այդ „կասկածների“ պատճառով, ամէն մի անգլիացի, որ գնում է Կովկաս, կամ իբրև ճանապարհորդ, կամ իբրև թղթակից, նոյնիսկ իբրև առևտրական, միշտ դառնում է ոստիկանական հսկողութեան ենթակայ։ 90-ական թւականներին մի քանի անգամ Կովկաս գնաց Լօնդոնի Daily News լրագրի յայտնի թղթակից Ֆիցջերալդը, որ յատուկ համակրանք էր տածում դէպի թիւրքահայոց խնդիրը, և, ինչպէս յայտնի է, գաղտնի կերպով սպանւեց Թիւրքիայում, իհարկէ, թիւրք գործակալների ձեռքով։ Ընդհանուր իր յանձնարարականների, Ֆիցջերալդը սիրով ընդունւում էր կառավարչապետի կողմից, ստանում նրանից „բաց թերթ“ անարգել ճանապարհորդելու համար Կովկասի բոլոր կողմերում, բայց դրա հետ միասին „գաղտնի հրահանգներ“ էր տրւում ոստիկանութեան՝ խստիւ հսկելու, թէ ուր է գնում նա, ում հետ է տեսնւում, ինչ է խօսում, ինչ է անում...

1895-ին Կովկասի վրայով Կարին անցաւ մի այլ անգլիացի, յայտնի թղթակից-հրապարակախօս Էմիլ Դիլօն, որի նամակները հայկական կոտորածների մասին ահագին աղմուկ բարձրացրին ամբողջ Եւրօպայում։ Դիլօն նոյնպէս ներկայացաւ կովկասեան կառավարչապետին, սիրով ընդունւեց նրանից, նոյնպէս ստացաւ „բաց թերթ“ անարգել ճանապարհորդելու համար, մինչև իսկ Կարին հասնելով՝ ամէնաջերմ աջակցութիւն գտաւ այնտեղի ռուսաց հիւպատոս Մաքսիմովի կողմից, — բայց չնայած դրան, դարձեալ ոստիկանութեան հրահանգ էր տրւած խստիւ հսկել նրա ամէն մի քայլը։ Եւ մի տարի յետոյ, երբ Դիլօն արդէն Անգլիայումն էր, կովկասեան ժանդարմական վարչութիւնը ահագին „գործ“ էր սկսել, թէ Թիֆլիզի հայերից ով է տեսնւել այդ անգլիացի թղթակցի հետ, ով է նրա հետ ճաշել, ինչ են խօսել, ում հետ գրագրութիւն ունի և այլն և այլն...

Չեմ կարող այս առիթով չյիշել Պետերբուրգի մի լեհ ծանօթիս սրամիտ հանաքը։ Սրանից երկու տարի առաջ, երբ ջերմ խօսակցութեան նիւթ էր անգլիացի կապիտալիստների Բագու գալը՝ այնտեղ նաւթային ձեռնարկներ սկսելու համար, և երբ մինիստրութիւնը զանազան խիստ ձեւակերպութիւններ էր դնում անգլիացի կապիտալիստների մուտքը թոյլատրելու համար, իմ լեհ բարեկամը ասել էր մի ռուս պաշտօնեայի.

— Ես կարծում եմ, մինիստրութիւնը թոյլ չի տայ անգլիացիների Կովկաս գալը, որովհետև նաւթային հարցի տակ խորամանկ անգլիացիք կարող են թագցրած լինել քաղաքական նպատակներ։ Խմ գիտէք, թէ ինչ ինտրիգներ են լարում Կովկասում...

— Այո՛, այո՛, պատասխանել էր ռուս պաշտօնեան, եթէ ինձանից կախւած լինէր, ես մի հատ անգլիացի էլ չէի թողնի Ռուսաստանի սահմաններում։

— Բայց և այնպէս, — վրայ էր բերել հանաքչի լեհը, — անգլիացիք կը գան Բագու, որովհետև նրանք շատ հարուստ են և նախ քան Բագու գնալը՝ գալու են Պետերբուրգ իրենց լիք քսակներով „ազդեցիկ մարդկանց“ տեսնելու համար...

— Այդ էլ ճիշդ է, — վրայ էր բերել ռուս պաշտօնեան, ժպտալով, — փողը ինչ ասես չի անիլ...

. . . . . .

Վերջապէս Կովկաս ճանապարհ ընկան Մասալով և Ուխտոմսկի։ Նրանց յանձնարարւած էր իմանալ երկու բան. 1) ճի՞շդ է, որ հայոց դպրոցներում հակառուսական պրոպագանդա էր լինում, և 2) ճի՞շդ է, որ Կովկասի հայերը տածում են ջերմ համակրութիւն դէպի անգլիացիները և անգլիական քաղաքականութիւնը։ Այդ յանձնարարութիւնը իրենց ուղեցոյց դարձրած՝ Մասալով և Ուխտոմսկին հասան Թիֆլիզ, գնացին Երևան, մտան Էջմիածին, մի քանի օր հիւր եղան հայոց կաթողիկոսին, նորից դարձան Թիֆլիզ, տեսնւեցին հայերի հետ, շատ բան լսեցին, շատ բան դիտեցին և վերադարձան Պետերբուրգ շատ որոշ պատասխանով։

Այդ պատասխանի մէջ, որ զեկուցման ձևով ներկայացրին ներքին գործերի մինիստրին, իշխան Ուխտոմսկի և Մասալով վճռական կերպով հերքում էին կովկասեան հայերի դէմ բարձած մեղադրանքները։

— Շատ ցաւում եմ, — ասել է մինիստր Գօրեմիկին, ընդունելով այդ զեկուցագիրը, — որ չեմ կարող ընթացք տալ դրան, որովհետև մինիստրութիւնը արդէն մի զեկուցում է ներկայացրել նորին մեծութեան, բոլորովին հակառակ բովանդակութեամբ։ Մինիստրութիւնը չի կարող փոխել իր կարծիքը. մնում է, որ դուք փոխէք ձեր զեկուցման բովանդակութիւնը“...

... Բանից դուրս է գալիս, որ դեռ այն ժամանակ, երբ Մասալով և Ուխտոմսկի փաստեր էին հաւաքում, Գօրեմիկին և Պօբեդօնոսցեվ կարողացան նորից յաղթող հանդիսանալ պալատական այն փոքրիկ կուսակցութեան դէմ, որ կարողացել էր համոզել թագաւոր կայսրին քննիչներ ուղարկել Կովկաս հարցը ուսումնասիրելու համար, և իբրև հետևանք այդ յաղթութեան՝ նրանք անմիջապէս առաջ մղեցին հակահայկական զեկուցումը և պաշտօնական ընթացք տւեցին նրան։ Դրանից յետոյ էր, որ սկսւեցին մի շարք նորանոր խստութիւններ Կովկասի հայերի դէմ։

Դուք տեսնում էք ուրեմն, որ շատ անգամ պետա-

կան առաջնակարգ մի զեկուցում գրելու համար, եթէ մինչև իսկ այդ զեկուցումից կախուած լինի մի ամբողջ ազգի հանգստութիւնը, իսկի կարիք չկայ բարեխղճօրէն փաստերը ուսումնասիրելու և ճշմարտութեան դրօշակի տակ մնալու։ Փաստերի տեղ կարելի է դնել „օտար ինտրիգներ“ և ճշմարտութեան տեղ՝ „պետութեան ապահովութիւն“ բառերը, և գրել ինչ որ կամենաք, ինչ որ կարող է տեղաւորուել ոևէ մեծ մինիստրի փոքրիկ գլխում...

Ի դէպ։ Երբ 1896 թուին Էջմիածնի հայոց կաթողիկոսի անունից մի հայ տեսնուել էր ներքին գործերի մինիստրի հետ՝ խնդրելու դպրոցներու վերաբացման համար, մինիստրը, իմիջի այլոց, ասել էր. „Հայոց դպրոցների փակումը մի պատիժ է Կովկասի հայերին այն համակրութեան համար, որ նրանք ցոյց են տալիս Անգլիային“։

Ահա այդ տեսակ „զեկուցագրերի“ արդիւնքն է, որ այսօր ռուսաց մամուլի ամէնազազրելի ներկայացուցիչները, պետական շահերի պաշտպանների դիմակի տակ ծածկուող այդ արարածները, որոնք վարժուել են իրենց ականջները միշտ խլշտրած պահել մինիստրական կաբինէտների դռան ճեղքերի մօտ, աջ ու ձախ, տեղի ու անտեղի, մի բան են կրկնում, մի բան են քարոզում. „Հայերը հակակառավարչական ձգտումներ ունեն, հայերը անգլիական ինտրիգների գործիք են“։ Այսպէս դատող ռուս գրողների և լրագրերի կարծիքով, եթէ Կովկասի հայերը փող են տալիս իրենց սովատանջ թիւրքահայ եղբայրներին կամ բողոքում են նրանց ճնշումների դէմ, այդ անում են ոչ թէ մարդասիրութիւնից և եղբայրսիրութիւնից դրդուած, այլ իբրև կոյր գործիքներ „անգլիական ինտրիգների“, և կամ եթէ թիւնից և եղբայրսիրութիւնից դրդուած, այլ իբրև կոյր գործիքներ „անգլիական ինտրիգների“, և կամ եթէ Եւրոպա ապաստանած հայերը բողոք են բարձրացնում յօգուտ իրենց ստրուկ եղբայրների, այդ հետևանք է ոչ թէ մարդկային տարրական պարտականութեան, այլ դարձեալ „անգլիական ինտրիգների“։

Սատանաներ և դևեր տեսնել այնտեղ, ուր „անմեղ հրեշտակներ“ են նստած, — դա ժամանակակից ռուս „զեկուցագրողների“ և ազգասէր-գրողների նշանաբանն է, երբ գործ ունեն ոևէ փոքրիկ ազգութեան կամ ոևէ քաղաքական խնդրի հետ։ Դա, եթէ կամենում էք, մի հիւանդոտ դրութիւն է, մի քաղաքական մղձաւանջ, որ խեղդում է այդ պարոններին, որոնք նոյնիսկ հայկական կոտորածներից յետոյ մի գլուխ գոռում են, թէ հայերը ուզում են վերականգնել Մեծ-Հայաստանը՝ մինչև Ռօստով Դոնի/վրայ։

Եւ գիտէք, ինչու համար է ստեղծուած, „մինչև Ռոստով Դոնի/վրայ“ խօսքը։ Նրա համար, որ ցոյց տան, թէ հայերի երազած Մեծ-Հայաստան ստեղծելը կապ ունի անգլիական այն քաղաքականութեան հետ, որ հակառուսական պատնէշը ուզում է հիմնել Կովկասեան լեռների վրայ...

Էրնէկ իմանայի, ո՞րն է աւելի հեշտ — հայերին՝ տեսնել Մեծ-Հայաստան, թէ ռուսներին՝ ազատել մեծ-յիմարներից...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Temps իր 18 սեպտեմբերի խմբագրականը նուիրած է պատրիարքական տագնապին։ Հատուած մը.

„Կարելի է մտածել թէ կեղեքումներու վերսկսումը որոնց զոհ են Հայաստանի դժբախտ բնակիչները՝ թերեւս անուղղակի եւ լռելեայն կերպով իր մասն ունեցած ըլլայ այն շարժառիթներու թիւին մէջ, որոնք այդ ընթացքին (հրաժարման) պատճառն եղան։ Ամէնէն յուզիչ լուրերը կը պտտին այդ բազմատանջ բնակչութիւններու կացութեան մասին։ Իրենց անպատիժ մնալէն խրախուսուած՝ քիւրդերը վերստին սկսած են իրենց աւար-աւերը մնացած հայերուն վրայ։ Նորէն ջարդեր տեղի ունեցեր են, թէեւ առայժմ ցանցառ։ Այնքան տանջուած ցեղի մը բեկորները պաշտպանելու փոխանակ, օսմանեան իշխանութիւնները, յատկապէս Ատանայի, Ցիգրանակերտի եւ Բաղէշի նահանգներուն մէջ, որքերը տարագրելէ եւ ապաստարանները ոչնչացնելէ ետք, քացարծակ ձեռնպահութեան մը մէջ կը մեկուսանան եղեր, ուրկէ մերթ դուրս կ'ելլեն միայն նոր անարդարութիւն մը գործելու համար իրենց վարչութեան տակ գտնուողներուն դէմ։ Այս բաները պէտք է որ գիտցին, ո՛չ միայն որպէսզի Եւրոպան չափէ իր պատասխանատուութիւնը, թոյլ տալէ առաջ որ Նորոգուին — եթէ այդ խայտառակութիւնը տեղի ունենայ — Հայաստանի առաջին կոտորածներուն արհաւիրքները, այլ որպէսզի հանրային կարծիքը զգուշանայ գրաւելէ նիւթական շահերու մտահոգութեամբ եւ քիչ կամ շատ նպաստաւոր դաշնագրերու քանակցութեամբ։

* * *

Autorité իր 27 սեպտեմբեր համարին մէջ, „Դուռը և Հայերը“ խորագրին տակ, նկարագրելով այն բոլոր կեղեքումները որ թիւրք իշխանութիւնները կուտան ճամբորդ հայերուն, հետևեալ տողերով կը վերջացնէ.

„Այդ խաղը վտանգաւոր է, որովհետեւ արտասահմանի բազմաթիւ հայ զաղութները մտահոգ կը զգաղին թիւրք հողը գըտնուող իրենց եղբայրներուն կացութեամբը, եւ պիտի չթերանան պետութիւններու միջամտութիւնը հայցելու։ Արդ պէտք չէ հետեւցնել այդ պետութիւններու նախկին անշարժութենէն թէ միշտ այդպէս ալ պիտի մնայ։ Անոնցմէ մէկ քանին թերեւս պատրուակ մը կը փնտռեն իրագործելու համար ինչ ինչ ծրագրեր, եւ Աբդիւլ Համիդի տաքտիքը ներքին վտանգի մը առջեւն առնելու տեղ, կրնայ դուրսը շատ աւելի իրական վտանգ մը ստեղծէ“։

* * *

Պր. Օգիւստ Բէնառ Union nationale-ի մէջ հրատարակած իր մեկ յօդուածը այս խօսքերով կը փակէ.

„Ուրախութեամբ իմացանք որ այն սուրը կռիւը որ մենք տիպ տարիէ իվեր կը մղէինք Հայաստանի դահիճին դէմ՝ սուլթանին սեւ հոգուն մէջ վրդով ծգած է, մենք կը յուսանք — մեր վառ տենչն է ատ, մեր խորին համոզումը — որ շատ չանցած յաղթանակը պիտի վաստկինք“։

* * *

Revue Blanche-ի վերջին համարին մէջ պր. Պօլ Լուի, մատնանիշ ընելով մօտալուտ կոտորածներու մասին Եւրոպա հասած շշուկները, հրաւէր կը կարդայ բոլոր անենգ հոգիներուն, մարդկութեան ախոյեաններուն — ինչ ալ ըլլայ իրենց քաղաքական դաւանանքը — որ փութան երեւան հանեն ու նշաւակեն յղութեան մէջ գտնուող այդ անցքերը, քանի ատեն կայ։ Յօդուածագիրը կը յիշատակէ թէ ինչպէս Հանոթօ ու Լոբանով 1895-ի կոտորածներու ատեն լռութեան դաւադրութիւնը կազմեցին քօղ մը քաշելու համար ահաւոր իրականութեան և ժողովուրդներու խիղճին միջև, և կը շարունակէ.

„Պատշաճ էր արթնցնել այս դեռ ներկայ անցեալը, այն

պանուն, երբ Աբդիւլ Համիդ, իր Թեսալիոյ աջողանքներէն գինովցած, Թերեւս ձեռքի տակէ քաջալերուած կեդրոնական կամ արեւելեան Եւրոպայի պետութիւններէ՝ կը ճգնի նորէն իր մատները թաթխել անհաւատներուն արիւնը: Այս անգամ պէտք է որ բոլոր անկախ միտքերը միաբանին ճշմարտութիւնը իմանալու, եւ գիտնալէն ետք, հրապարակելու համար: Այս կամ այն ազգի երկրակալական դիտումները հոս քնաւ մտազբաղ չընէր մեզ եւ խօսքը քաղաքական խնդրի մը մասին ալ չէ: Բայց մենք կ'ըսենք որ եթէ այսօր կամ վաղը, Ստամբօլի ճնշման տակ, եւ դիւանատներու մեղսակցութեան շնորհիւ, քիւրդերը իրենց ընազդներուն ասպարէզ տային, մենք հանգիստ չպիտի ունենանք մինչեւ ընդվզումը չներփչենք եւ հանրային զարշանքը չթելադրենք Արեւմուտքի մեր ընկերութիւններու մէջ տակաւին առնական եւ առողջ մնացած մասին":

* * *

Մօտալուտ ջարդերու լուրը նկատելի յուզում առաջ բերաւ Եւրոպական մամուլին մէջ: Խղճի նոր խայթ մը ցնցեց ամէնքը՝ այն ահաւոր պատասխանատուութեան առջեւ, որ ունի Եւրոպան այդ աղէտներուն կրկնումին հանդէպ, նախորդ ոճիրները հանդուրժած և անոնց դէմ բողոքած չըլլալուն:

Պր. Ուրբէն Գոֆիէ, Aurore-ի 27/9 սեպտեմբեր համարին մէջ „Հայաստանի համար" խորագրին տակ կորովի խմբագրական մը ունի, որ ամբաստանագրի մը տպաւորութիւնը կը թողու: Տեղի սղութիւնը կը հարկադրէ մեզ բերել վերջին հատուածը միայն.

„Պէտք է որ բովանդակ Եւրոպան ճանչնայ իր պարտականութիւնը եւ կատարէ վերջապէս. որովհետեւ ամբողջ Եւրոպան մեղապարտ է Հայաստանի թշուառութիւններուն համար. խաղաղական համաժողովներու եւ մարդասիրական յայտարարագրերու բոլոր ծանծաղուկներուն հակառակ, Եւրոպան է որ համերաշխաբար կը ստանձնէ անլուր ոճիրի մը պատասխանատուութիւնը,

Սուլթան Աբդիւլ Համիդ սոսկալիթխաբ մարդասպան մըն է. գիտենք: Փորը Ասիոյ մէջ ամէն քան տեղի ունեցաւ իր բացորոշ հրամանով եւ ճշգրիտ հրահանգներով. համաձայն ենք: Բայց քանի մը չի ծառայեր շարունակ ատ կրկնելը, եթէ պատժական վճռի մը պիտի չյանգինք: Երբ մենք մեր ապահով տեղէն նախատինքներ կը տեղանք վայրի գազանին, աւելի եւս կը զայրացնենք իր ծանկերուն մէջ բռնած զոհերուն դէմ: Մէկ դէպք մը միայն փրկել կրնայ հայերու մնացորդը. պետութիւններու համաձայնութիւնը եւ անյապաղ միջամտութիւնը...

Մեծ Մարդասպանը Աբդիւլ Համիդը չէ, Եւրոպան է Մեծ Մարդասպանը...

Ի նշ ամօթ:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

„Դրօշակ"-ի № 5-ի „Ազդարարութեան" մէջ ակնարկած անձը չկատարեց մեր պահանջը. ուստի ազատ կը զգանք մեզի հրապարակաւ յայտարարելու թէ այդ պարոնը կը կոչի ՄԻՀՐԱՆ ՊԷՕՐԷՔՃԵԱՆ, Թարգման Սալոնիկի ռուսական ընդհանուր հիւպատոսարանին:

Այդ խաչագողը իւրացուցած է 500 ֆրանքի գումար մը, որ մեր ընկերներէն մէկը երկու տարի առաջ յանձնած էր իրեն՝ մեր ձեռքը հասցնելու համար: Յատկապէս կը զգուշացնենք Սալոնիկի հայ հասարակութիւնը այդ պարոնին շահատակութիւններուն դէմ, որովհետեւ, ինչպէս կը լսենք, դեռ վերջերս իսկ „սովեաքներու" անունով դրամ կը հանգանակէ եղեր Սալոնիկի մէջ...

Այս նշաւակումը՝ առաջին պատիժ իրեն:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

ՆԻՒՐԱՏԻՊԻՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ստացած է՝

Զոկէն 40 ֆրանք, Խ. Գ. 20, Դ. Մխ. 5,. — Բօթուշանէն՝ Զ. Տ. 20 ֆր. — Գրաւոբիւնդընէն՝ Վրէժ 5 ֆր. — Զէյթուն 3 շիլին:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Ապառաժ 500 ռուբլի, Այգեստան 400, Հիւսիսակերտ 100, „Դաղբաշ" խ. 70, „Թօփալ-տէրտէր" խ. 8, „Սուր."-ի խ. 5: Գումար 1083 ռուբլի:

ԱՐՃԻՒ Կոմիտէն՝

Ծերունու ձիռամբ 600 դահեկան, Հաշտարարի ձեռամբ 150, Ղեւոնդի ձեռամբ 103, Անանունի ձեռամբ 52, Ճամբորդ 24, Տ. Աբշալոյս 19: Գումար 948 դահեկան:

ՏԱՊԱՐ Կեդր. Կոմիտէն՝

Նարեկացի (մայիս, յունիս, յուլիս) 120 դահեկան, Հրաշ (մայիս, յունիս, յուլիս) 120, զեղջուկ 5: Գումար 245 դահեկան:

ՈՍԿԵՀԱՆՔԻ Կոմիտէն՝

Աղբատասէր Անուշեան 40 դահեկան, Արշաւիր խմբէն՝ Լուսին 6. 25, Ժառայ 5, Արսլանեան խ. 10, Փայլակ 5. 25, Վարդ 5. 25, Անկուտի 10. 50, Միսթոռա 6. 25: — Զ. քաղաքի Ազգասէր խմբէն՝ Ճ. Գ., Փ. Ա. 20-ական, Պ. Պ., Շ. Լ 10-ական, Պ. Ս., Ս. Կ. 5-ական: — ԱՐՇԱԿԱՒԱՆԷՆ՝ Անմնազոն խ. 75, Երկիւղած 35, Փիլիպոս 20, մայիս ամսուն մէջ՝ Անմնազոն խ. 23. 50, Երկիւղած խ. 16, Ազգասէր խ. 10, — Փայլակ 5. 25, Կամառ 7. 25, Արիւն խ. 12. 50, Որոտում՝ խ. 20: Գումար 383 դահեկան ողջ:

ՀՈՒՐ-ԵՐԿԱԹ-ի Բաբիլոն կոմիտէն, (մայիսէն – յունիս 15) Վահէ 59. 50, եւս 137, 75, եւս 56, եւս 28, եւս 30. 50, Մահ-Արծրունի 84, Մուշեղ 3 եւս 73. 50, Գամ 61, եւս 17. 50, Խաթիլ 43, եւս 45. 75, եւս 38. 50, Ժիրայր 124. 75, եւս 24. 50, Ազատ 90, եւս 8. 50, եւս 63. 50, Մէջ 81. 75, եւս 24. 50, եւս 33, Սուր 28, եւս 43. 75, Դժուար հաստոզուղ 112. 50, Մեռեալ 76, Ջամիշ 22, Սերտար 179. 375, Փէն 41, Կարագի գող 99: Գումար 1730 դահեկան 12. 5 հարիւրորդ (փուտ դրամ):

Վեց-հարիւրեան 200 դահեկան, Գերեզման խումբ 5. 25, Ա. քաղաքի Արամայիս խմբէն (ամսավճարներ)՝ Արան, Արուսեակ, Ճիվան 10-ական, Սեմ., Ցկ. 5-ական, Նոյն քաղաքի Մկզեոնեան խմբէն 25, Առը, Նայշ եւ Կայը 5-ական դահեկան: Գումար 285 դահեկան 25 (ողջ դրամ):

ՆԱԻԱՀԱՆԳՍՏԻ Կոմիտէն՝

Շառաւիղ խ. 50 ռուբլի, Նիկոլ (յունիս եւ յուլիս) 2: ՁՈՐԱՓՈՐ-ից 47. 85, Նոյն տեղից նէբ մի արծաթ ժամացոյց եւ երեք կտոր լաթ, ՍԵՒՋՈՒՐ-ից Երգիչ 9. 50: ԱՊԱՍՏԱՆ-ի Շաւարշան գիւղից Պ. Թ. 20 ռուբլի, Հ. Ս., Ց. Կ. 15-ական, Կ. Զ., Գ. Ա. 10-ական, Ս. Ուստա, Մ. Ք. 8-ական, Ց. Ս. 7, Ց. Ա. 5, Գ. Ք., Ց. Ա. 3-ական, Դ. Ե., Ց. Թ., Պ. Գ. 2-ական: Ակոռի գիւղից Ց. Ք. 5: Արտաշատ գիւղից Կ. Ա. 15, Ց. Բ. 12, Կ. Գ. 8, Մ. Կ. 7, Գ. Բ. 6, Վ. Մ. 2: Լեռի ջուր գիւղից Գ. Մ. 10, Ա. Կ., Մ. Կ., Ց. Գ., Ց. Տ.. Ց. Մ. 5-ական. Ց. Մ. 4, Ա. Ն., Գ. Ս., Ս. Ս., Ս. Զ., Ց. Մ. 3-ական, Ց. Ն., Կ. Թ., Ց. Մ., Ց. Զ., Ց. Ա., Մ. Ե. 2-ական, Վ. Ս. 1:

Բազրատունեաց խ. (6 ամսավճար) 20 ռուբլի, Արշակունեաց խ. (6 ամսավճար) 29. 50, Մամիկոնեան խ. (6 ամսավճար) 17. 50, Նէբերներ 3. 20: Հաւազումար 411 ռուբլի 55 կոպէկ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կեդր. Կոմիտէն՝

ՈՒԷՍԹ-ՀՕՐՕՔԷՆԷՆ՝ անդամավճարներ 5 դոլար 50 սենթ, — „Դրօշակ"-ի հաւակիրներ՝ Սաք երկաթ 2 դոլար, Ա. Վ. Պասմաճեան եղբայրներ, Ց. Պոյաճեան, P. S. Turnamian, մէկ-մէկ դոլար, Ե. Ա., Ն. խ. խ. խ. եղբայրներ, Տիգրան Մուրատեան, Ոնդ Կ. Սաք Նիշան, Զարմայր, G. Cardashian, 50-ական սենթ, Ց. Զարնշանեան, R. Tabib, Ց. Դաթաֆեան, K. Basmajian, Ն. Սարաճեան, Մանաֆ 25-ական սենթ: Գումար 15 դոլար 50 սենթ:

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)